

# Բրիտանացի ԱՅԱՏԱՆ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՈՒԽՏԱԳԵԱՅՈՒԹՅՈՒՆԸ ՏԵՐՈՒՆԱԿԱՆ ՍՐԲԱՎԱՅՐԵՐ

ԵԿԵՂԵՅԱԿԱՆ ԿՅԱՆՔԻ ԼՐԱՏՈՒ

ՏՈՒՆԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ, ԿՐՈՆ

ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹ

ՔԱՐՈՉՉԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ ՀՐԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ



ՀԱՅՐ ԱՐՈՒՍ Ա. ԷՄԻՒԱՆԵՒ ԿՐՈՆԱԿԱՆ, ՄՇԱԿՈՒԹՅՈՒՆ, ԼՐԱՎԱԿԱՆ ԵՐԿՇԱՐԱԹԱԹԵՐԹ

## ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՈՒԽՏԱԳԵԱՅՈՒԹՅՈՒՆԸ ՏԵՐՈՒՆԱԿԱՆ ՍՐԲԱՎԱՅՐԵՐ

### ՎԵՂՎԱՆ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԱՅՅԸ ՀՈՐԳԱՆՆԸ

Հունվարի 14-ին Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց կաթողիկոսն ուխտագնացությամբ մեկնեց դեպի տերունական սրբավայրեր: Մինչ Հորդանան մեկնելը Վեհափառ Հայրապետը մի քանի ժամով հանգրվանեց Շարժայի (Հյուսիսային Էմիրություններ) Սբ. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցում, որտեղ ջերմ ու սրտաբուխ հանդիպում ունեցավ հայ համայնքի հետ:

Հայտրոջ օրը Ամանի օդանավակայանում Վեհափառ Հայրապետին դիմավորեցին Երուսաղեմի հայոց պատրիարք ամենապատիվ Ս. Թորգոմ արք. Մանուկյանը, Հորդանանի առաջնորդ Ս. Վահան արք. Թուփայանը, Հորդանանի կառավարության անդամներ, տեղական խորհրդի եւ հայ բարեգործական միությունների ներկայացուցիչներ:

Օդանավակայանից, թագավորական ավտոշարասյան ուղեցույթով, Նորին Սրբությունն իր շքախմբով ուղղվեց դեպի Սբ. Թադեոս եկեղեցի, ուր իր օրհնության խոսքն ասաց ներկա հավատացյալներին: Վեհափառ Հայրապետը գոհունակությամբ նշեց, որ իր անդրանիկ հայրապետական այցը հայրենիքից դուրս ուխտագնացությունն է դեպի Սբ. Երկիր:

Նույն օրը Հայոց Հայրապետը հոգելից պահեր ունեցավ Յուզբաշյան-Գյուլբենկյան վարժարանում, որի սաները երգեցողության և ասունքի գեղեցիկ հայտագրով ներկայացան Վեհափառ Հայրապետին: Նորին Սրբությունը, իր օրհնությունը տալով փորձիկներին, բարձր գնահատեց ավելի քան կեսդարյա ուղի անցած կրթության սպասարկուների աշխատանքը: Երեկոյան Վեհափառ Հայրապետը Մարիոթ հյուրանոցի ընդունելությունների դահլիճում հանդիպում ունեցավ նաև Հորդանանի հայ ունեցալի հետ: Ամենայն Հայոց կաթողիկոսի պատգամն Ամենկնդրելու, Հայաստանի եւ Մայր Աթոռի մասին լսելու ցանկությամբ հանդիպման էին եկել ծնողներ՝ փորձիկների հետ, երիտասարդներ ու տարեցներ:

«Մենք Հայրապետն ենք եղած ոչ թե մեր ուժերին ու կարողություններին ապավինելով, այլ ունենալով մեր ժողովրդի սերը հանդեպ Հայոց եկեղեցին, մեր ժողովրդի վստահությունը համրեալ մեր եկեղեցականությունը:

Հավատում ենք, որ ձեզ հետ միասին, ձեր հավատին ու ձեր սիրուն ապավինած՝ պիտի կարողանանք բարի ընթացքով դեպի մեր երազների խաղաղ հանգրվանը առաջնորդել մեր զավակներին»,- ասաց Վեհափառ Հայրապետը՝ անդրադառնալով հայ ժողովրդի հերոսական ոգուն թե՛ Սփյուռքում եւ թե՛ Հայաստանում ու Արցախում:

### ՀՈՐԳԱՆՆԻ ԹԱԳՎՈՐԸ ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՊԱՐԳԵՒՍԱՐԵՑ ԵՐԿՐԻ ՔԱՐՈՉՉԱԿԱՆ ԸՔԱՆՇԱՆՈՎ

Հունվարի 16-ին Հորդանանում որպես ուխտավոր գտնվող Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց կաթողիկոսն այցելեց Ամ-

իր բարի սիրտը՝ հրահանգ տալով իր աշխարհներին՝ տեր կանգնել գաղթական ու սովյալ հայերին»,- ասաց Վեհափառ Հայրապետը՝ աղոթելով, որպեսզի Աստված խաղաղ ու անվտանգ պահի հյուրընկալ Հորդանանը: Բարձր գնահատելով հորդանանահայ համայնքի՝ իրեն երկրի ազնիվ ու հավատարիմ քաղաքացիների դերակատարությունը, Արդալահ Բին Հուսեյնը Վեհափառ Հայրապետի կուրծքը գարդարեց Հորդանանի բարձրագույն՝ Ա կարգի շքանշանով:

### ՎԵՂՎԱՆ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՀԱՆԿԻՊՈՒՄԸ ՀՈՐԳԱՆՆԻ ՎԱՐՉՎՈՒՄԸ

Հունվարի 16-ին Նորին Սրբությունը հանդիպում ունեցավ նաև Հորդանանի վարչապետ Ար-

խուրյանը դիմավորեցին հավատացյալները:

Սբ. Պատարագի ընթացքում քարոզեց ու իր պատգամը ներկաներին հաղորդեց Վեհափառ Հայրապետը: Անդրադառնալով Հայաստանի, Արցախի եւ Սփյուռքի համագործակցությանը՝ Նորին Սրբությունը նշեց. «Մեր մեծ երազն է, որ ազատ ու անկախ հայրենի մեր երկիրը վերագտնի իր խաղաղ, կայուն, ապահով ու անվտանգ կյանքը, համայն մեր ժողովրդի համախումբ ջանքերով վերականգնի արարումի իր ուժերը՝ ի շահ սեփական առաջընթացի: Եկել է ժամանակը, որ Սփյուռք-Հայաստան եւ Հայաստան-Արցախ կապերն առավել ամրանան, գործանան ու ծառայեն նույն նպատակին»:

Իրրեւ նշան հաղորդյան եւ երաշխիք գոյության Վեհափառ Հայրապետը եկեղեցու Սբ. Սեղանի համար նկիրեց մարմարակերտ մի խաչ: Պատարագից հետո Վեհափառ Հայրապետը մեկնեց Ամանից ոչ շատ հեռու գտնվող Ջարաշ ամունը կրող պատմական քաղաք, որի պատկերները մեկուն պահպանված է Հայաստան անվան արձանագրությունը:

### ԱՅՅԵԼՈՒԹՅՈՒՆ ՀԻՍՈՒՄԻ ՄԿՐՏԱՎԱՅՐ

Հունվարի 17-ին Վեհափառ Հայրապետն ուխտի մեկնեց Հորդանան գետի հովտում գտնվող Հիսուսի մկրտավայրը: Ըստ մի շարք գիտնականների՝ այս սրբավայրում է քարոզել ու մկրտել Սբ. Հովհաննիսը: Մկրտավայրում Նորին Սրբությանը դիմավորեց շուրջ 500 հայորդի: Հատուկ պատրաստված բեմի վրա կատարվեց Ջրօրհնյաց արարողություն, որից հետո Վեհափառն իր պատգամը տվեց ներկաներին՝ նշելով հայ ժողովրդի նվիրական հավատարկ հանդեպ Երկնային Տիրոջ:

Մկրտավայրից Վեհափառ Հայրապետը Հուսեյն թագավորի անունը կրող կամրջով մեկնեց Երուսաղեմ:

### ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՈՒԽՏԱԳԵԱՅՈՒԹՅՈՒՆԸ ԵՐՈՒՍԱԿԱՆ

Հորդանանից հունվարի 17-ին Վեհափառ Հայրապետը մեկնեց Երուսաղեմ, որի հարավային մուտքի՝ Յաֆայի դարպասի մոտ

Նորին Սրբությանը ցնծությամբ դիմավորեց տարբեր երկրներից Երուսաղեմ ժամանած թագմա-հազար ուխտավորների թագմությունը: Վեհափառ Հայրապետին դիմավորելու էին եկել նաև Երուսաղեմի հայոց պատրիարքության միաբանությունը, քույր եկեղեցիների պետերն ու նրանց ներկայացուցիչները, պետական պաշտոնյաներ:

25 տարի անց Երուսաղեմի հայկական հնագույն սրբավայրը՝ Սբ. Հակոբյանց անունով «Հրաշափառի» երգեցողության կրկին դիմավորում էր Ամենայն Հայոց կաթողիկոսի գալուստը: Երջապատված հայոց երկու պատրիարք սրբազաններով՝ Վեհափառ Հայրապետն իր գոհունակությունը հայտնեց թացառիկ առիթի համար, որ Ծննդյան տոներից թագմարիվ ուխտավորների եւ հայ համայնքի հետ միասին աղոթելու է տերունական սրբավայրերում: «Մենք մեր ուխտը պիտի նորոգենք Բեթղեհեմի սուրբծննդյան Այրի մեջ, միասին աղոթենք, որ Աստված ապահով ու անվտանգ պահի աշխարհը համայն, երկիրն Հայոց եւ Եկեղեցին Հայաստանյայց՝ Ամենայն Հայոց կաթողիկոսությունը Մայր Աթոռ Սբ. Էջմիածնով, Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսական Աթոռը, հատկապես Երուսաղեմի պատրիարքական այս հնամենի Աթոռը եւ Կ. Պոլսի պատրիարքությունը հայոց»,- ասաց Վեհափառ Հայրապետը:

### ՍՈՒՐԵՆԿԱՆ ԿՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅՑՆԵՐԸ ԲԵԹՂԵՆՄՈՒՄ

Հունվարի 18-ին՝ իրն տոմարով հայկական Ծննդյան Երազայության տոնին, Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց կաթողիկոսը, ընկերակցությամբ Երուսաղեմի հայոց պատրիարք Ս. Թորգոմ արք. Մանուկյանի, Կ. Պոլսու հայոց պատրիարք Ս. Մեսրոպ արք. Մուրաֆյանի եւ Երուսաղեմի միաբանության ու Նորին Սրբությանն ուղեկցող հոգևորականների, մեկնեց Բեթղեհեմ: Բեթղեհեմում Վեհափառ Հայրապետին դիմավորեցին քաղաքային Հաննա Նասսարը, Պաղեստինի ազգային իշխանության զինվորական ընդհանուր հրամանատար գեներալ Աբու Բաքրը, այլ պաշտոնական անձինք, ինչպես նաև ինչպես լատին պատրիարքների ներկայացուցիչները:

Շարունակությունը էջ 2



մանի արքունական ապարանք, ուր Վեհափառ Հայրապետին ընդունեց Հորդանանի հաշիմական թագավոր Արդալահ Բին Հուսեյնը: Հայոց Հայրապետին ընկերակցում էին Երուսաղեմի հայոց պատրիարք ամենապատիվ Ս. Թորգոմ արք. Մանուկյանը, Հորդանանի առաջնորդ Ս. Վահան արք. Թուփայանը, Սեպուհ եպս. Չուլջյանը ու Արբախան եպս. Սլրոյանը:

Հանդիպման ընթացքում Վեհափառ Հայրապետն իր երախտիքի եւ շնորհակալության խոսքն ուղղեց հաշիմական թագավորության գահակալներին:

«Հայերիս սրտի մեջ հատուկ տեղ ունեն Հաշիմյան եւ Հորդանան ամուները, որովհետեւ այն օրերին, երբ օսմանցիների ջարդերից ու հալածանքներից մազապարտ իսլամը անտեր ու անօգնական հասան Հորդանանի անապատը, Չեր վեսն անուրը կրող Արդալահ իշխանը բացեց

դու-Բաուժ Բաուադրեի հետ եւ իր երախտագիտությունը հայտնեց հաշիմական թագավորներին ու կառավարությանը, որոնց հովանու ներքո հայ ժողովուրդը պահպանում է իր ազգային ու եկեղեցական ավանդույթները: Հորդանանի վարչապետը, մեծ ճորովատանքով խոսելով հայ ժողովրդի մասին, Նորին Սրբությանը դիմեց խնդրանքով՝ դատնալ խաղաղության քարոզիչը՝ ի շահ կրոնների եւ ժողովուրդների միջեւ համագործակցություն ասպիտվման:

### ՍԲ. ՊԱՏԱՐԱԳ ԱՄՈՒՆԻ ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՅՈՒՄ

Հորդանանի թագավորի եւ վարչապետի հետ ունեցած հանդիպումներից հետո Ամենայն Հայոց կաթողիկոսը ժամանեց Ամանի Սբ. Թադեոս հայոց եկեղեցի, ուր Հայոց Հայրապետին հպարտությամբ ու ուրա-



Սկիզբ էլ 1

Ողջուցներով Վեհափառ Հայրապետին՝ Բերդեհեմի քաղաքապետը խաղաղության մտադրանք հղեց բոլոր ներկաներին: «Մենք էլ ձեզ մեծ հասկանում ենք խաղաղության իմաստն ու նշանակությունը, եւ այսօր աշխարհը կարոտ է դրան»,- խաղաղության կոչ արեց նաեւ Վեհափառ Հայրապետը:

Ժամը 14.00-ին հայրապետական քափորը շարժվեց Սբ. Ծննդյան եկեղեցի: Հիտուսի ծննդյան սրբավայրում, ուր հավասար իրավասություններով ներկայանում են հայ, հույն եւ կարոլիկ եկեղեցիները, մատուցվեց Ամենայն Հայոց կաթողիկոսի ուխտագնացության անդրանիկ հայրապետական Պատարագ: Սրբազան արարողության ընթացքում Նորին Սրբությունը իր պատգամն ու խաղաղության մտաբանը հղեց բոլոր ներկաներին:

Հավարտ Սբ. Պատարագի՝ Վեհափառ Հայրապետի նախագահությամբ եւ զույգ պատրիարքների մասնակցությամբ տեղի ունեցավ ճրագալույցի ընթացքը, որին սեղանակից էին նաեւ բոլոր եկեղեցիների հոգեւորականները, Պաղեստինի ազգային իշխանության ներկայացուցիչներ, դիվանագետներ, ուխտավորներ:

Երեկոյան ժամը 22.00-ին Վեհափառ Հայրապետի նախագահությամբ սկսվեց Ծննդյան գիշերային ժամերգությունը, որի բարձրակետը Վեհափառ Հայրապետի կողմից Սբ. Այրում Հիտուս Քրիստոսի ծնունդն ավետող կեպիշերային ավետարանական ընթերցումներն էին: Վեհափառ Հայրապետի կողքին էին Երուսաղեմի եւ Կ. Պոլսի հայոց պատրիարքները: Ուխտավորներն ուրախությամբ դիմավորեցին նաեւ Հայաստանի Հանրապետության նախագահ Ռոբերտ Քոչարյանի եւ Պաղեստինի ազգային իշխանության ղեկավար Յասեր Արաֆատի: Արարողության ավարտին, Հիտուս Քրիստոսի Ծննդյան ավետիսով, Վեհափառ Հայրապետն իր պատգամը հաղորդեց հազարավոր ուխտավորներին:

«Բերդեհեմի Սբ. Այրից աղոթքով հայցում ենք, որ փրկչական սերը, խաղաղությունը, արդարությունը, բարին մշտամահանգրվանի նաեւ հայրենի մեր եզերքներում, Հայաստանում եւ Արցախում»,- ասաց Վեհափառ Հայրապետը:

Սբ. Ծննդյան արարողությունները շարունակվեցին մինչեւ վաղ առավոտ: Սբ. Այրում տեղի ունեցավ նաեւ Զորիների արարողությունը:

**ՎԵՀՎՈՒՆ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԱՅՅԸ ՊԱՂԵՍԻՆԻ ԷԶՊԱՅԻՆ ԻԾՆԱԿՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՎ ՅԱՄԵՐ ԱՐԱՅԱԹԻՆ**

Հունվարի 18-ին՝ Սբ. Ծննդյան ճրագալույցի Պատարագից հետո, Ամենայն Հայոց կաթողիկոսը Երուսաղեմի եւ Կ. Պոլսի հայոց պատրիարքների եւ եպիսկոպոսական դասի ուղեկցությամբ այցելեց Պաղեստինի ազգային իշխանության նախագահ Յասեր Արաֆատին: Այստեղ էր նաեւ Հայաստանի Հանրապետության նախագահ Ռոբերտ Քոչարյանը, որն այդ օրերին մեծ պատվիրակությամբ գտնվում էր Երուսաղեմում հայկական ծննդյան արարողություններին մասնակցելու նպատակով: Պաղեստինյան իշխանության ղեկավարը Հայոց Հայրապետին պարգևատրեց «Բերդեհեմ-2000» շքանշանով: Նույն պատվին արժանացան նաեւ Երուսաղեմի պատրիարք ամենապատիվ Ս. Թորգոմ արք. Մանուկյանը:



Ս. Թորգոմ արք. Մանուկյանը իր անձնակազմով Ս. Մեսրոպ արք. Ամրաֆյանը: Ծնորհակալություն հայտնելով իր եւ պատրիարք հայրերի անունից՝ Վեհափառ Հայրապետը ողջունեց պաղեստինյան ղեկավարին՝ ճշտելով, որ նրա իշխանության ներքո պաղեստինցի ժողովուրդն իմաստունությամբ իրականություն դարձրեց իր մեծ երազը՝ վերադառնալու տուն:

**ԱՆԵՆՈՒՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԵՆ ԷԿՈՒՄԵՆԻԿ ՀԱՆԳՒՊՈՒՄՆԵՐԸ ԵՐՈՒՍԱԿՆԵՍԻ ՀԱՅՈՑ ՊԱՏՐԱՐԿԱՐԱՆՈՒՄ**

Ն. Ս. Օ. Տ. Տ. Գաբրիել Բ Ամենայն Հայոց կաթողիկոսը Հունվարի 21-ին Երուսաղեմի հայոց պատրիարքարանում առաջին հանդիպումները ունեցավ բոլոր եկեղեցիների պետերի եւ ներկայացուցիչների հետ: Հանդիպում-

ներին մասնակցում էին նաեւ Երուսաղեմի հայոց պատրիարք ամենապատիվ Ս. Թորգոմ արք. Մանուկյանը, ԱՄՆ Արեւելյան թեմի առաջնորդ Ս. Կաթակ արք. Պարսամյանը եւ Երուսաղեմի լուսարարապետ Ս. Նուրհան եպ. Մանուկյանը:

Առավոտյան Վեհափառ Հայրապետին այցելեց Հույն Ուղղափառ Եկեղեցու պատվիրակությունը՝ պատրիարքական փոխանորդ Ս. Վասիլիոս Բլազոս արքեպիսկոպոսի գլխավորությամբ: Ապա Նորին Սրբության հյուրն էին Երուսաղեմի լատին պատրիարք Ս. Միշել արք. Սաբաթի Հույն Կաթողիկե Եկեղեցու առաջնորդ Լուիֆի Լահամի, Մարոնիտ Եկեղեցու արք. Պոլ Սայասի եւ ֆրանսիական միաբանության ներկայացուցիչ ընկերակցությամբ: Ծնորհակալություն հայտնելով այցելության համար՝ Վեհափառ Հայրապետը ճշտեց, որ տեղում կան սրբավայրեր կատարած իր այս ուխտագնացությունն առանձին մի արժեք է ստանում շնորհիվ բոլոր եկեղեցիների հետ ունեցած շփումների:

Նույն օրը Վեհափառ Հայրապետը հանդիպում ունեցավ Հայ Եկեղեցու դավանակից Դպտի, Երովպական եւ Ատրի եկեղեցիների պետերի հետ: Եղբայրական ողջունեք հղելով դավանակից Եկեղեցիների պետերին՝ Վեհափառ Հայրապետը մաղթեց սեր եւ համագործակցություն, շեշտեց նոր հազարամյակի շեմին խաղաղության եւ սիրո հաստատման համար Եկեղեցիների տանձնելիք պատասխանակալությունը:

Երուսաղեմում պապական նվիրակի հետ ունեցած հան-

դիպման ընթացքում Հայոց Հայրապետը շեշտեց միջեկեղեցական հարաբերությունների կարևորությունը եւ մասնավորապես Հայ եւ Կաթողիկե եկեղեցիների միջեւ վերջին տասը տարիներին ամրացած կապերը: Այս առնչությամբ Վեհափառ Հայրապետն անդրադարձավ Գաբրիել Ա կաթողիկոսի Հոռն կատարած այցելությանը, հիշատակեց Գաբրիել Ա Հայրապետի իրականացրած շրջագումն Հոռնի պապի Մայր Աթոռ այցելու ցանկությունը:

Կեսօրին Վեհափառ Հայրապետին այցելեցին նաեւ Անգլիկան եւ Լյութերական եկեղեցիների ներկայացուցիչները: Զրույցի ընթացքում հյուրերը մտախոհություն հայտնեցին Երուսաղեմում քրիստոնյաների բնիկ նվազման առիթով: Վեհափառ Հայրապետը, ավստանք հայտնելով այս երեւույթի կապակցությամբ, միաժամանակ

վավերացրեց ճշտեց, որ Տիրոջ նկատմամբ ունեցած սիրո հավատքի գործընթաց է, որ պետք է շեղանք տեղում կան սրբավայրերը: «Քրիստոնեական մեր հավատը ցրելու է ամեն տեսակի մտավախություն, եւ էական մեր էկոմենիկ ոգին է, որը պիտի գորացնենք»,- ասաց Վեհափառ Հայրապետը:

Հետմիջօրեին Վեհափառ Հայրապետը պատրիարք սրբազանի առաջնորդությամբ այցելեց պատրիարքարանի բանգարան, մատենադարան, Սբ. Թորոսի անվան ծեռագրատուն, երանաշնորհ պատրիարքների դամբարան, Երուսաղեմի հայ համայնքի գերեզմանատուն, եղավ Սբ. Հրեշտակապետաց եկեղեցում եւ Սբ. Սարգիս գանձատանը, ծանոթացավ պատրիարքարանի հոգեւոր, մշակութային, կրթական եւ ազգային կառույցների ներկա իրավիճակին:

Երեկոյան Նորին Սրբություն այցելեց Ժառանգավորաց վարժարանի սաներին եւ իր պատգամը հաղորդեց ապագա ընտանացուներին: «Հոգեւոր ասպարեզը կոչում է եւ առաքելություն: Մեր գգեսուն արտահագուստ չէ, մեր երայուն է, մեր ոգին է, մեր առաքելության առանցքն է»,- ասաց Վեհափառ Հայրապետը:

Ն. Ս. Օ. Տ. Տ. Գաբրիել Բ Ամենայն Հայոց կաթողիկոսը հունվարի 22-ին այցելեց Զիբեյայ լեռ եւ Գեթսեմանի:

Զիբեյայ լեռան մատուռում պահպանվում է Հիտուսի ուռնակները, իսկ լեռան շրջակայքում գտնվում է նաեւ Հայր մեր վանձայն՝ Հիտուսի իր աշակերտներին ուսուցանեց Տերունական աղոթքը: Այսօր վանքի պատերին աշխարհի ամենատարբեր լեզուներով, այդ թվում՝ նաեւ հայերեն, արձանագրված է «Հայր մերը»: Մի պահ կանգ առնելով հայերեն արձանագրության առջեւ՝ Վեհափառ Հայրապետն ու իր ուղեկիցներն արտասանեցին Տերունական աղոթքը: Վեհափառ Հայրապետը եղավ նաեւ ռուսական եկեղեցում, գրուցեց ռուս վանկանների հետ, այցելեց Սյունյաց Արտավան իշխանի մոր Ծուշանիկի գերեզման:

Այստեղից Վեհափառ Հայրապետն ուղղվեց Գեթսեմանիի ձոր, ուր գտնվում է Սբ. Աստվածածնի գերեզմանը: Ծնվաչոր համբուրելով Տիրամոր գերեզմանը՝ Վեհափառ Հայրապետն իր աղոթքը հղեց առ Աստված:

**ԱՅՅԵԼՈՒԹՅՈՒՆ Ս. ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ՏԱՃԱՐ**

Հունվարի 22-ին կեսօրից հետո, սկսուցանեցին նվազամասն առաջնորդությունը, Վեհափառ Հայրապետը՝ Երուսաղեմի հայոց պատրիարքի եւ հոգեւորականների ընկերակցությամբ, հավատավոր հայ համայնքի եւ ուխտավորների բափրոյն ուղեկցուցեց Նորին Սրբություն տաճար: Սբ. Հարություն տաճարում ծիսակատարական իրավունք ունեցն Հույն, Հայ եւ Լատին Եկեղեցիները:

Առաջանալով դեպի Տիրոջ պատգամատեղը՝ Ամենայն Հայոց կաթողիկոսը համբուրեց սրբաբար, խնկարկեց, ապա իջավ նվիրակական այն մեծ սրբավայրը, որտեղ գտնվում է Հիտուսի գերեզմանը: Համբուրելով Տի-

րոջ գերեզմանաքարը եւ ռուրս գալով սրբավայրից՝ Վեհափառ Հայրապետը տվեց ավանդական ավետիսը: «Քրիստոս յառեալի մեռելոց»:

Միջինական սրբավայրից Վեհափառ Հայրապետն ուղղվեց դեպի Վերնատուն՝ երկրորդ Գողգոթա: Վերնատանը սաղմուսացությունից եւ կանոնական աղոթքից հետո տեղի ունեցավ երեկոյան ժամերգություն:

Այս սրբավայրը գտնվում է Հայ Եկեղեցու իրավասության ներքո: Ըստ պատմության՝ դեպի Վերնատուն բարձրացող աստիճանների սեմին է ուշա-



թափվել Տիրամայրը: Վերնատան Սբ. Աստվածածնի անունը կրող ծախակողմյան խորանի առջեւ ամեն տարի՝ Վերափոխման տոնի հաջորդ կիրակի օրը, մատուցվում է Սբ. Պատարագ: Այստեղ է գտնվում նաեւ յուրաքանչյուր կանանց հիշատակի խորանը:

**ԳԱՐԵԳԻՆ Բ ԿԱԹՈՂԻԿՈՍԸ ՎԵՐԱԳԱՐՉԱՎ ՄԱՅՐ ԱԹՈՒ**

Ն. Ս. Օ. Տ. Տ. Գաբրիել Բ Ամենայն Հայոց կաթողիկոսը, ավարտելով ուխտագնացությունը տերունական սրբավայրեր, հունվարի 25-ին վերադարձավ Մայր Աթոռ Սբ. Էջմիածին:

Երեւանի «Զվարթնոց» օդանավակայանում Վեհափառ Հայրապետին դիմավորեցին Հայաստանի Հանրապետության կրոնի գործերի պետական խորհրդի նախագահի պաշտոնակատար Լեւոն Մկրտչյանը, Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու թեմակալ առաջնորդներ, Մայր Աթոռի միաբանության անդամները:

Մայր տաճարում իջման Սբ. Մեղանի առջեւ Վեհափառ Հայրապետի վերադարձը ողջունեց Սբ. Էջմիածնի լուսարարապետ գերշ. Տ. Հուսիկ արք. Սանթրոնյանը:

«Առաջին Մեր ուղեւորությունն արտասահման, որ եղավ ուխտագնացություն Սուրբ Երկիր, տերունակողի սուրբ վայրեր, բարեհաջող, խանդավառող ու գոտողքք ենք հղում առ Աստված մեր Եկեղեցու շինության, մեր ժողովրդի բարօր կյանքի, մեր նվիրակական կաթողիկոսի պայծառացման եւ գորացման համար»,- ասաց Վեհափառ Հայրապետը՝ այցելության մասին իր տպավորությունները կիսելով ներկաների հետ:

# ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

## ՎՊԱՐՁԱՊԵՍ ԼԻՆԵԼ «ՀԱՅ ՔՐԻՍՏՈՆՅԱՍ»

«Քրիստոնեայ Հայաստան» թերթի  
70-րդ համարի առիթով

Մեր պապերն ու Երանց Գաբրիելները «ո՛վ էս, ի՞նչ ազգից ես» հարցին սովորաբար պատասխանել են՝ «հայ քրիստոնյա եմ»։ Իսկ երբ իրենց ազգակիցներին մեկը մի վատ բան է արել, զարմացել ու հանդիմանել են՝ «հայ քրիստոնյա չե՛ս»։ Հայ կյանքի ու ինքնաճանաչման այս հատկանշական իրողությունը շատ էլ հեռու չէ մեզանից, պարզապես պետք է մի փոքր ետ նայել, մի փոքր «պեղումներ» կատարել սեփական հոգում, ընթերցել ու վերընթերցել Ավետարանը՝ զգալու համար, թե որքան խորը հետք է թողել քրիստոնեությունը մեր ազգային կերտվածքի վրա ու դարձել նրա ամենավեր ու մարտը հատկապես ինչպիսի շաղխը։ Բայց ետ նայելով՝ միաժամանակ անխուսափելիորեն պիտի բախվենք նաեւ այլ իրողությունների, պատմության ընթացքում մեզ պատահաճած չարի որոգայթներին, պիտի տեսնենք անմիաբանության, մեծամտության, չարականության բազում օրինակներ, որոնք հյուժել, թուլացրել, պառակտել են մեզ։ Եւ ցավալից այն է, որ այդ ամենն անցյալ իրողությունն է միայն։ Ըստ էության՝ 1700-ամյա քրիստոնյա Հայաստանի պատմությունը մի շարունակական պայքարի պատմություն է, պայքար, որի մի կողմում է Հիսուս Քրիստոսի սուրբ Ավետարանն է, սուրբ Գրիգոր Լուսավորիչն է նրա ժառանգները, հայոց սուրբ հայրապետներն ու վարդապետները, Մաշտոցն ու Նարեկացին, Շնորհալիքն ու Տաթևացին, քրիստոնեական բարոյական վեհ սկզբունքները, բարեպաշտության ու եղբայրասիրության, ներողամտության հորդորները, մյուս կողմում՝ մարդկային մեղքերն ու մոլորությունները, ատելությունն ու նախանձը, սնոտիապաշտությունը, օտարամոլությունն ու թշնամությունը։ Անհմատ է հարցնել, թե որն է մեզ համար նախընտրելին, սակայն մեզինքն ոչ ոք ապահովագրված չէ ապրաքելուց, մեղանշելուց, անկումից։ Ուրեմն ի՞նչ անել, ինչպե՛ս ապրել այսուհետեւ՝ 2000 թվականի սահմանագիծն անցնելով։ Դժվար հարց է, բայց, մեր կարծիքով, դյուրինը պատասխան ունի՝ պարզապես պետք է լինել **հայ քրիստոնյա**։

Ուղիղ չորս տարի առաջ՝ 1997-ի հունվարին, երբ ինձ բախտ վիճակվեց երջանկահիշատակ Գաբրիել Ա Ամենայն Հայոց կաթողիկոսի հանձնարարությամբ Մայր Աթոռում հրատարակվելիք թերթի համար ծրագիր ներկայացնել, Վեհափառ Հայրապետին առաջարկեցի «Քրիստոնեայ Հայաստան» անվանումը՝ հիմնավորելով, որ այդպիսին է եղել Հայաստանն անցյալում, եւ մեր փափագն է, որ այդպիսին լինի նաեւ ապագայում։ Հավանեց գաղափարը, միայն ցանկացա՞մ, որ անունը դասական ուղղագրությամբ գրվի։ Իսկ մարտ ամսին լույս տեսած թերթի առաջին համարին «ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՔԱՅԱԼԵՐԱՆ» վերնագրված հատուկ գիր տվեց, որը սկսվում էր հետեւյալ բնաբանով.

«ՔՐԻՍՏՈՆԵԱՅ ՀԱՅԱՍՏԱՆ...»  
Յանկուցիչ անուն՝  
Յագեցած պատմական ճշմարտութեամբ,  
Իրողական ճշմարտականութեամբ»:

Տեքստում Հայրապետը, ուղեւնչելով թերթի գործունեությունը, նաեւ հետեւյալ պատգամն է թողել. «Խորհրդային շրջանի 70 տարիներու պատճառած թմրութեան դէմ զարթոնցի խթան թող ըլլայ «Քրիստոնեայ Հայաստան»-ը։ Թող աւելի պէս սրբէ անաստուածութեան, անտարբերութեան հետքերն ու վերքերն էլ թող սերմնացանի պէս վերստին ցանէ Քրիստոսի Ա. Անտարարին եւ մեր Սրբազան Հայրերու շունչն ու ոգին, խօսքն ու գործը մեր նորանկախացեալ Հայաստանի ժողովուրդին»:

Եւ ահա լույս է տեսնում մեր թերթի 70-րդ համարը։ Այս անցնող տարիներին Հայաստանում շատ բան փոխվեց իրադարձությունների տեսանկյունից, լավ կամ վատ, բայց որքանով մեք փոխվեցինք։ Դժվար է այսօր միանշանակ գնահատական տալ մեր ժամանակին։ Գնահատականները սովորաբար տրվում են տարիների հեծվից։ Մի բան միայն հստակ է, որ սուրբ Գրիգորի ժամանակից սկսված իրադարձությունները շարունակվում է մինչեւ այսօր... Աղոթենք առ Աստված, որ մեր երկիրն իրոք դառնա ՔՐԻՍՏՈՆՅԱՍ ՀԱՅԱՍՏԱՆ, բայց այս նպատակին նվիրվենք ոչ միայն խոսքով, այլեւ գործով, որն այլ բան չէ, քան պարզապես լինել **հայ քրիստոնյա**։  
*Կարեն ՄԱՐԵՏՈՅԱՆ*

# ԳԱՐԵԳԻՆ Բ ԿԱԹՈՂԻԿՈՍՆ ԸՆԴՈՒՆԵՑ ՄԱՅՔԼ ԼԵՄՈՆԻՆ

Մայր Աթոռ Սբ. Էջմիածին, 13 հունվարի, 2000 թ.  
Հունվարի 13-ին Մայր Աթոռ Սբ. Էջմիածին այցելեց Հայաստանում ԱՄՆ արքայազգի և լիազոր դեսպան Մայրլ Լեմոնը՝ անցանք շնորհավորելու Ս. Ս. Ս. Տ. Գաբրիել Բ Ամենայն Հայոց կաթողիկոսին՝ Սբ. Ծննդյան օրն առիթով և բարի մանապարհ մտաբերելու Վեհափառ Հայրապետին՝ Երուսաղեմ կարարելիք ուխտագնացությունից առաջ։  
Հանդիպման ընթացքում ԱՄՆ դեսպանին անդրադարձավ Հայաստանի ներքաղաքական և օրնաբանական իրավիճակին, ինչպես նաև Լեմոնային Ղարաբաղի խնդրի խաղաղ կարգավորման ուղղությամբ օգնությունը ցուցաբերելու համար։  
Նորին Սրբությունը, շնորհակալություն հայտնելով դեսպանին այցելության համար, ընդգծեց երկու երկրների համագործակցության կարևորությունը։ Ի դեմս պրն. Լեմոնի՝ Վեհափառ Հայրապետը բարձր գնահատեց Հայաստանում իրենց դիվանագիտական առաքելությունը իրականացնող օրաբերիկրյա դեսպանների սրբազան և բարի մտքերով, որ ցուցաբերեցին Հայաստանի համար իրենց անհրաժեշտությունը։

# ԱՅՅԵԼՈՒԹՅՈՒՆ ԱՐՈՎՅԱՆԻ ՈՒՂՂԻՉ ՏՈՒՆ

Հանդիպումը Արովյանի ուղղիչ տան բանտարկյալների հետ առավել ճնշող էր, որովհետև ազատարկվածները կանցյալ ու երեխաներ էին։ Նրանցից շատերը, գիտակցելով իրենց կատարած հանցանքի ծանրությունը, հաստատակամորեն խոստանում են պատիժը կրելուց հետո չկրկնել սխալը եւ շուկել իրենց խաթարված կենսագրությունը։ Իսկ այդ հանցանքները տարբեր են. մեկը սոցիալական ծայրահեղ պայմանների գոհն է, մյուսը՝ պատանեկան մեծամտության կամ տարաբնույնության, երրորդը՝ վեժնաբանության է։ Այսինքն բոլորն էլ, ազատարկված լինելով հանդերձ, սիրով եւ կրեկցանքի են կարոտ, մարդկային ջերմ վերաբերմունքի, որն անպայման կօգնի նրանց վերագտնելու օրինավոր կյանքով ապրելու ճանապարհը։

Իսկ գաղութում գտնվող տարբեր տարիքի 200 կնոջ եւ շուրջ 100 պատանու կյանքում այդ օրն առանձնահատուկ էր։ Մինչ այդ մի քանի անգամ գաղութ այցելած սրբազանը՝ 1700-ամյակի վարիչ-քարտուղար էր Սբ. Ներսես բարեգործական հիմնադրամի նախագահ Մեսրոպ արքեպիսկոպոս Աջնյանը, որոշեց հունվարի 5-ին՝ Սուրբ Ծննդյան Ծրագրության օրն իր օրհնությունն ու աջակցությունը բերել քանոնարկյալներին։ Այդ օրը մկրտվեց 33 պատանի, ուրբեց խմբարձը Տիրոջից ոչ միայն «հավատն էր, հույսը, սերն ու մկրտությունը», այլ նաեւ բաղձալի ազատությունը։

Մկրտության կարգից հետո տեղի ունեցավ Ծրագրության ճաշկերույթ՝ մասնակցությամբ գաղութի ղեկավարության, կալանավորների եւ հյուրերի։ Ազատարկված կանանց ու երեխաներին Սբ. Ներսես Ծնորհալի բարեգործական հիմնադրամի կողմից բաժանվեցին ամսանոցյա եւ սուրբծննդյան նվերներ։ Գաղութի մտայն պատերի ներսում հենցիցի երգն ու երաժշտությունը, ուրով երեսանի «Կարոտ» նվագախմբի երաժշտներն ու աշուղական եւ ազգագրական երգերի կատարողներ Ալեքսան Հարությունյանն ու Մեյրան Ավագյանը փորձեցին այդ օրը հնարավորության սահմաններում փարատել ազատագրված պատանիների եւ կանանց բախիժն ու տխրությունը։

Այս անձնախաղեյ միջոցառումը նախաձեռնելով եւ իրականացնելով սրբազան հայրն ու նրան ուղեկցող հոգեւորականները՝ Աշոտ արքեպիսկոպոս Մնացականյանը, Արովյանի հոգեւոր հովիվ Աբրահամ ավագ քին, Մարգարյանցը, ինչպես նաեւ Սբ.

համար դժվարին պահին՝ աջակցելով երկրի կայունության պահպանման գործին։  
Հայ ժողովրդի հիասթափության հանդիպ ունեցած հավաքրով ու համոզվածությամբ՝ Նորին Սրբությունն իր վարստությունը հայրենց երկրի հերպազա կայունության պահպանման և զարարաղայն խնդրի բարեհաջող հանգուցալուծման անկողնությամբ։ Իր հերթին պրն. Լեմոնը կարեւորեց Հայաստանի եւ հայ ժողովրդի պարսպարկուն կարարությունը օրաբանությանն։  
**ՄԱՆՈ ԳԻՎԱՆ**

Ներսես Ծնորհալի հիմնադրամի ներկայացուցիչները մեկ անգամ եւս հաստատեցին այն ճշմարտությունը, որ սիրո է բարեգործության արժանի են բոլորը։ Չէ որ Տերն Իր սերն էր քաշյուկ քոլորից, նաեւ հիվանդներից, խեղճերից, բշվառներից, տառապալներին, կյանքի բնականոն ընթացքից շեղվածներին՝ փորձելով վերադարձնել նրանց օրհնավոր կյանքի։


Մկրտության արարողությանն ու ճաշկերույթին մասնակցեցին գաղութի տնօրեն պրն. Յուրի Ջանալյանը եւ աշխատակազմի անդամները։ Վերջում սրբազան հայրն օրհնեց քոլորից՝ մկրտվածներին, մյուս կալանավորներին, կենսալիքից՝ պատգամելով չմոռանալ իրենց պարտականությունները մասին։  
Այնքան նաեւ, որ այս իրազայի միջոցառման հովանավորներն էին ամերիկահայ Գաղութն եւ Էմմա Սողոյանները, որոնք շատ հեռվից նույնպես իրենց սերն ու աջակցություն էին հայտնում դատապարտված կանանց ու պատանիներին՝ հուսալով, որ այդ քաշյուկ եւ կօզնն նրանց ազատվել կատարված հանցագործության ծանրությունից եւ այսուհետ ապրել ազնիվ ու արժանապատիվ կյանքով։  
**Յուրա ԿԱՐՎՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՎԱՆՔԵՐԻՆ ՆՎԻՐՎԱԾ ՀԱՆՐԱՄԱՏՉԵԼԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ



1700-ամյակի գրասենյակի հովանավորությամբ եւ ՀՀ պատմության եւ մշակույթի հուշարձանների պահպանության վարչության միջոցով սկսվել է Հայաստանի վանքերին ու նշանավոր հնավայրերին նվիրված բազմաձայլ գունավոր թերթիկների հանրամատչելի շարքի տպագրու-

թյունը։ Արդեն լույս են տեսել շարքի առաջին չորս հրատարակությունները՝ նվիրված Հաղբատին, Սանահինին (հեղ.՝ Կ. Հովհաննիսյան), Էջմիածնի մայր տաճարին (հեղ.՝ Մ. Հասրաբյան), Աղցին (հեղ.՝ Հ. Սիմոնյան)։ Համանման հրատարակություններ եղել են նախկինում խորհրդային շրջանում, սակայն դրանցում վանքերը դիտվում էին սոսկ որպես «ճարտարապետական հուշարձաններ»։ Յավոր, այս շարքում եւս զգալի է այդ մոտեցումը (հատկապես Հաղբատի եւ Սանահինի պարագայում) որովհետեւ տեքստի հիմնական մասը վերաբերում է ճարտարապետական նկարագրություններին, իսկ թե ինչպիսի վանական կյանք է եղել տեղում, ինչ առաջնորդներ, ուսուցչապետներ, գրիչներ ու մանրանկարիչներ են գործել, ինչպիսի նշանավոր սրբություններ են պահվել եւ այլն, մնում են անհայտ, կամ ճշվում հայացիցի։ Հուսով ենք, որ առաջիկա հրատարակություններում հաշվի կառնվի նաեւ այս հանգամանքը։ Անեն դեպքում, առկա հրատարակությունները կարելու է օգտակար են, քանի որ հանրամատչելի եղանակով ներկայացնում են տվյալ վայրի պատմությունն ու ճարտարապետությունը։ Նշելի է հատկապես Էջմիածնի



նվիրված թերթիկում վկայաբերված տեղեկությունների առատությունը, ինչպես եւ Աղցի թերթիկի տպագրությունը, քանի որ նախկինում այս մեծարժեք հուշարձանին նվիրված առաջին հրատարակություն չի եղել։  
**Կ. Մ.**

### Դեռևս ղեկավարներին, Ամենայն Հայոց կարողիկոս Ն. Ս. Ս. Տ. Ֆարեգին Բ-ի նախաշնորհայն, Ս. Էջմիածնում կայացան հանդիպումներ Հայաստանի մարզայինների և քննակազմատարողների մասնակցությամբ, ուր քննարկվեցին նաև մշակվեցին Ս. Ծննդյան փոխհանձնարարական հանդիպումների կազմակերպման ծրագրեր: Հունվարի սկզբին այդ ծրագրերն իրականություն դարձան Հայաստանի բոլոր բնակիչները: Ստորև ներկայացնում ենք Գուգարաց բնում կարողված փոխհանձնարարության որոշ մանրամասներ:

Հայ Առաքելական Եկեղեցու Գուգարաց բնում առանձնակի հանդիսավորությամբ ու շուրջ մեկ ամիսամիջամասնական տոններից մեծագույնը մեր Տեր Հիսուս Քրիստոսի ծնունդն ու հայտնությունը: Մարզկենտրոնի գլխավոր իրավարարուն և այլ վայրերում վաղօրոք փակցվել էին Սուրբ Ծնունդն ավետող մեծօրոք արարքեր:

Հունվարի 5-ի երեկոյան Վանձորի Հայրի հրապարակում տեղի ունեցավ գրական-երաժշտական հանդիսություն, որին հիմնականում մասնակցեցին փոքրիկ հավատացյալները: Երաժշտական և պարային մանկական համույթների ելույթները, սամուրը սրբազորովեցին 2000 ԲՈՒԿԱՆԻ առաջին ծնունդ, որն սկսեց տեղյակ միջոցառման ժամանակ: Ամուսնի մրցույթից հետո բաժանվեցին մրցանակներ ու գլխավոր: Այս հավատացյալները բեմադրանք կրպակներով խաչի երբ իրականացրին դեպի Ս. Աստվածածին եկեղեցի, ուր

ճրագվողից Պատարագ տրվեց, և ավետից Փրկչի ծնունդը: Պատարագն մասնակցում էին մարզային եւ քաղաքային իշխանությունների, հասարակայնության ներկայացուցիչներ:

Հունվարի 6-ին Սուրբ Պատարագ, ինչպես և հանրոք օրվան, գլխավորում էր Գուգարաց բնի առաջնորդ Սեպուհ Եպիսկոպոս Չուլջյանը:

Պատարագն մասնակցում էին Լոռու մարզպետ Հենրիկ Բոչինյանը, փոխմարզպետ Արամ Քոչարյանը, Վանձորի քաղաքապետ Մամբեկ Գաբրիելյանը, մարզային և քաղաքային տարբեր գերատեսչությունների ղեկավարներ ու ներկայացուցիչներ, մտավորականներ, հավատացյալներ:

Հարեղենից Ամենայն Հայոց Հայրապետի օրհնություն գիրով նվիրված Սուրբ Ծննդյան տոնին: Թեմի առաջնորդ հավատացյալներին հոգեց նաև իր խոսքը՝ կոչ անելով փոխադարձ սիրու և միասնության:

Որպես խորհուրդ մանուկ Հիսուսի մկրտության Սեպուհ արքայազնը եկեղեցու բակում կատարեց Ջրօրհնի արարողություն:

Բազմաթիվ վաճառողները բաժին ստացան օրհնված ջրից և եկեղեցու բակում բաժանվող մատուցվող, սպառում վերադարձան խաղաղված ու ճշմարիտ հավատքի շուրջ հոգիներում:

Ծննդյան տոնի միջոցառումները կազմակերպել էին Գուգարաց բնի առաջնորդարանը, Լոռու մարզպետարանն ու Վանձորի քաղաքապետարանը: Դա մեկ անգամ ես հավատում էմ մեր ժողովրդի կյանքում հոգեւոր և աշխարհիկ իշխանությունների միասնականությունը, որն ապագա գոյատևման միակ արակազմն է:

Ս. Ծննդյան տոնի հանդիսավոր ճշմունքից բացի, Գուգարաց բնը կատարել է նաև հետևյալ գործերը:

Հունվարի 4-ին բնի առաջնորդարանը և Տիկնաց միությունը հաճելի անակնկալ մատուցեցին

## Ս. ԾՆՆԴՅԱՆ ՏՈՆԸ ԳՈՒԳԱՐԱՅ ԹԵՄՈՒՄ

Վանձորի մանկատանը՝ փոքրիկներին հատկացվելով սնունդ և ամանորյա նվերներ:

Նույն օրը Գուգարաց բնի առաջնորդարանը, Ծննդյան տոնին իր առիթով, շնորհավորագրեր հղեց նաև Վանձորի ծերանոցին բարձրորակ սնունդները հասցնելով:

Իսկ տիկնիկային բաժնուրդի բարեգործական ներկայացումը «Աստղիկ» հաշմանդամների միությունում գրանցված մանուկների համար էր: Հովանավոր դարձավ Գուգարաց բնի առաջնորդարանը էր: Վերջինիս կողմից երեխաներն ստացան նաև ամանորյա նվերներ:

ՍուրբԾննդյան նվերների առիթով առաջնորդարանը հովանավորեց 1000 երեխայի՝ դիտելու Վանձորի տիկնիկային բաժնուրդի ներկայացումները:

Հունվարի 6-ին՝ սուրբԾննդյան արարողություններից հետո, Գուգարաց բնի առաջնորդարանը

միջոցառումներ կազմակերպեց և նվերներ մատուցեց «Նարեկ» երիվ 3 մանկական հիվանդանոցներում: Իսկ հունվարի 7-ին Վանձորի գործառնատն տեղի ունեցավ հոգևոր համբեր, և նվերներ բաժանվեցին զինվորականներին: Նույն օրը Սուրբ Աստվածածին եկեղեցում կնքվեց թիվ 8 դպրոցի 35 աշակերտ: Հունվարի 8-ին միջոցառում տեղի ունեցավ Վանձորի կայազորի հոգևոր աղայում, գործառնատն, ուր նույնպես նվերներ բաշխվեցին:

Հունվարի 5-ին, 6-ին և 7-ին սուրբԾննդյան միջոցառումներ տեղի ունեցան, և նվերներ բաշխվեցին նաև Սպիտակում, Ալավերդիում, Ստեփանավանում, Տաշիրում, Ախթալայում, Թումանյանում, Շամպուրում, Օձունում, Ծոփքանում, Գուգարքում, մարզի այլ բնակավայրերում: Հունվարի 12-ին կայացավ հանդիպում Վանձորի վեներանդների հետ:

Հար մանր հաղորդագրության

### ՇԻՐԱԿԻ ԹԵՄ

#### «ՏԷՐ, ՄԵՐՉԵՑԻՐ Ի ՄԵՉ»

Բնություն «խորհուրդ» իր աստվածատեղեկ էությամբ հայտնում է իրեն և միանգամից երեշտակային երգակցությամբ գովերգում էր Հզոր Աստվածամարդու ծնունդը: «Փառք Աստծուն՝ քարծուներուն, և երկրի վրա՝ խաղաղությունը, և հանունը մարդկանց մեջ»: Երկնային մարգարտուր քարծուներն իրցն ածուն էին խաղաղության անպարտ և պատմունքներ երկիրը պարարտելով Աստվածորդու թելադրած աստվածակերպի իմաստը իմաստը կատարելույան, իմաստը սրբության և անբարություն:

Այս խոսկուններով էի Գեորգ և Արմեն արկավազների հետ գնում Շիրակի մարզի Մամուրյան գյուղ և ապա Մարալիկ ավան, ուր փոխի դեմ ղեկավար հանդիպեցի Աստուծո՛ւ պատարագի. Տիրոջ ծննդյան և մկրտության ավետիչ փոխանցելի արևոտը արդող հավատացյալներին: Մեծ եղավ տխրությունս, երբ տեղեկացա, որ Մամուրյանի Ս. Թառևուն և Մարալիկի Ս. Աստվածածին եկեղեցիները կոմունիստների օրոք ցրոնի չստանալու են հանդիսացել, իսկ 30-ական թվականներից առ այսօր պատարագ չէր մատուցվել, աղոթք չէր արվել, խոսել չէր ծիպել:

Ինչե՛տ, Աստուծոյորի եկեղեցու սրբազան պատեհի ներսում բացեցինք մեր սիրուն ու հոգին Ամենայն Հայր Աստուծո՛ւ և զԳրաւատության շողորակ լուսավորի մեզ: Մեր հավատացյալներին փոխանցեցի Գարեգին Երկրորդ Հայրապետի օրհնությունն ու սուրբԾննդյան պատարագ հոգեց նրանց: Այս հոգեզոյալ խանդավառությամբ և մեր հայրերի աղոթքներով կատարեցինք ջրօրհնները, որը Տիրոջ մկրտության խորհուրդն ունի: Այլ խորհուրդ՝ երբ համակել ստեղծություններից, որոնք իրենք Հոր Աստուծո՛ւ ցնցեց մյուսնորայր ջուրն էին տանում սրբացնելու, ավելի հայացնելու համար իրենք օգտվեց: Հետաքրքրարար էր շինման ստեղծությունների հետ, նրանք երկուրդամ ակնմանքով էին պատմում իրենց սրբությունների՝ հրաշագործ Կարսի վանքի, 3-րդ դարում կառուցված Ս. Հակոբ եկեղեցու, Ս. Գրիգոր սրբապետի մասին, ուր ճգնել էր Ս. Լուսավորիչը: Տպավորել էր նաև սամուրյանցի, ծագումով՝ մշեցի, վարպետ Շավարշի պատմամբ Լուսավորչի և նրա շարքաւորների մասին:

Գյուղացիների հետ մեր շփումն

անկեղծ էր և անմիջական, իսկ ես մտովի վերհիշում էի ավետարանական պատմությունը, որը նկարագրում է մեր Տիրոջ՝ աշխարհի Ստեղծողի ու Փրկչի ծնունդը գյուղական մի պարզ մտայնում, ինչու էլ նա այս օրհնյալ ծնունդն ավետողներին՝ գյուղական մարզ հովիվներին:

Աստուծոյորիցների հետ ջերմ հանդիպումից հետո տեղաբնակ Գուգարիկ արկավազի ուղեկցությամբ ճանապարհվեցինք դեպի Մարալիկի Ս. Աստվածածին եկեղեցի: Ցավով պետք է նշեմ, որ 10 000 բնակիչ ունեցող Մարալիկի Ս. Աստվածածին եկեղեցին 1988 թվի աղետից հետո ամիսիսբար վիճակում է, և սակայն հավատացյալ մարալիկցիները վստահ են, որ իրենց նոր՝ երկու տասարդ և եռանդուն առաջնորդը Միքայել Ժ. վրդ. Աջապահյանը, հոգ կանցի եկեղեցու վերաշինության համար: Ինչպես նշել էի, 70 տարվա լուրջությունից հետո աղոթք լսվեց այս եկեղեցում, ջուր օրհնվեց, շարական երգվեց, և կենդանացան այս նվիրական բայերը:

Խանդավառ էր Մարալիկը, իսկ Ս. Ծննդյան առիթով քաղաքապետը՝ Թովմաս Մահակյանը, անձնական նրբախնամությամբ սիրո ճաշ՝ մատուց տվեց գյուղի պատերազմի վեներանդներին, ապա նաև այցելել էր ծննդատուն, ուր այդ նվիրական օրը երբեք երբևէ չէր ծնվել: «Եղո՛ղ Հիսուսի ծնունդը բարի ծնունդներ պարգևի մեզ, և բոց մահն անժամանակ չգա», - ասում էին գյուղացիները, իսկ Տիրոջ ծնունդը շատ սպասված ծնունդ էր բերում նաև այդ օրը: Բնություն «խորհուրդ» Տիրոջ ծննդյան պատարագը հաղորդում էր մեզ իր մարտի արքային, իսկ մեծը, իհարցած քննություն այս հրաշքով, կարծեմ նրա առաջնորդությամբ վերադառնում էինք Մայր Աթոռ Ս. Էջմիածին:

Չյուրեմ մարքուն էր երկրի երեսը, իսկ ես, վերհիշում և գգուն էի, բնի մայրիկ աստվածային գործության մարքուն և օրհնվում էր ջուրը՝ խորհուրդը Քրիստոսի մկրտության, և մտովի կրկնում էի տարբեր բարեի հոգու մարմնաչը. «ՏԷՐ, մեծնեցիք ի մեզ ի ձեռն Հոգւոյդ Սրբոյ և օրհնման զգուրս զայս, որպիսիք երկրի սա ի շինութիւն տանց, ի բժշկութիւն մարմնաց, ի փրկութիւն հոգոյց և միանձնաց, և օգուտկար ես ամենայն պէտս, վասն զի դու ես զորք մանու և մարդատր Աստված...»:

Չարեհ վրդ. ԿԱՐԿՆԵՐ

### ԿԱՆԳՈՒՆ Ե ԵՐԵՒԱՆԻ ԱՄԵՆԱՀԻՆ ԵԿԵՂԵՑԻՆ

«Մի մտացեր բարեգործություն և չե՛ր ունեցած բարիքների միջոց մասնակից դարձնելը, բնակիչ այդպիսի պատարագներն են հաճելի Աստուծո՛ւ» (Երբ., ԺԳ, 16):

Երկրի բնից գիրքն, որ Երևանի քաղաքի կենտրոնում Արմավա և

Աստվածածին իր գիրկն է հրավիրում բոլոր հավատացյալներին՝ լուսավորելու նրանց հոգիները:

Մակայն, դժբախտաբար, Երևանի ամենահին եկեղեցու վիճակն այսօր ինչպիսի մրախոջ է: Խոնավությունը բարաբայում և դարձրելով պակասված հրաշակները: Այս առիթով քաղաքի ստեղծագույն է: Յան

կանալով մեկ սնվում են համապատասխան անհանց ուշադրությունը

Մայր-Նովա փողոցների խաչմերուկում, ԳԱՄ լեզվի ինստիտուտի բակում, կանգուն է Երևանի ամենահին եկեղեցին՝ կարողիկ Սուրբ Աստվածածինը: Կանգուն է հակառակ բոլոր այն արհաւիրումների, որ եկեղեցին արհաւիրված եղավ կրե դարերի ընթացքում: 1693-1695 թթ. այստեղ կառուցված է եղել Երևանի ամենահին եկեղեցիներից մեկը, որը բարաբայում չեղարկվել էր 1936-ին: Մակայն, կանոնը Աստուծու, գիրական հսկողության չնորհիվ նույն փողոցում հայտնագործվել է Սուրբ Աստվածածին եկեղեցին՝ 13-րդ դարի կառույց:

Փոխվեցին ժամանակակիցը: Մարդիկ սկսեցին գիրակցել անցյալի սրբանշաններ և փորձեցին չզրկել դրանք: Եւ 1996-ին երջանակահարակ Գարեգին Ա կարողիկուսի և ժամանակի Արարչության բնի առաջնորդական փոխանորդի՝ ներկայիս Ամենայն Հայոց կարողիկոս Գարեգին Բ-ի շնորհի և օրհնությամբ վերաբացվեց կարողիկ Սուրբ Աստվածածինը, իսկ 1998-ին կառուցվեց և օծվեց նոր Սուրբ Սեղանը: Այսօր Ս.

հիվ հնարավոր է լինում կազմակերպել ծիսական կյանքը: Գարողիկ Սուրբ Աստվածածին եկեղեցին ունի համերաշխ ծիսական համայնք՝ համախմբված իր հոգևոր հովիվ՝ Ավետիս քահանայի Գանիկյանի շուրջ: Վերջինիս ընկերներն ու քահանայները են ամուսն չեն եկեղեցու հոգևորից: Բարեխար սակելով

մենք սովորաբար պարիկարգում ենք սիրտքսիայի, սակայն մեզանում էլ կան մարդիկ, որոնք իրենց համար վարարիցից հոժարակամ բաժնի են հստուն եկեղեցուն՝ իրենց լուսն մերցնելով հոգևոր կյանքի աշխուժացման գործում: Այդպիսի մարդկանցից է Մասնա Արարչային՝ սովորական հայ բրիտանյան, որն իր միջոցներով եկեղեցու համար կարելի էր պարագայներ մանկապարտեհ երեխաների համար պարարտացրեց նվերներ, իսկ բակում փրկադրեց փրկամատ, փոխի ունեցան ամանորյա և սուրբԾննդյան ռաբալի միջոցառումներ:

Հայրենիք մեր ռաբալությունը մեր սիրտի հոգևոր հովիվին, եկեղեցու բարեխարներին և պարագայիս մեր բոլոր հայրենակիցներին՝ աղոթում ենք, որ 2000 թվականը լինի խաղաղության փարի, իսկ մեր ժողովուրդը ավելի խորը գիրակցի հոգևոր դերն իր կյանքում, և մեր բոլոր եկեղեցիները միջր լինեցնեն լինեն հավատացյալներով:

Կարին ԱՄԲԵՆՆԵՐ

### ԶՐՈՐՀՆԵՔԻ ԱՐԱՐՈՂՈՒԹՅՈՒՆ ՎՆԵՎԱՆՈՒՄ

Գեղարքունյաց մարզի Արծվաճառ (նախկին Վանկվան, վերանվանվել է 1968 թ.) գյուղը հարուստ է մեր քրիստոնեական ազգային նկարագրի արտազոտը խաչքարերով ու վանքերով: Գյուղը հնում կրել է Վանկվան անունը: Այն կոչվել է նաև Կրանց, որի մասին հիշատակություն կա գյուղի հարավարևմտյան եզրին՝ Ալիշայի կոչվող գետակի աջ ափին վեր խաչքարած մի եկեղեցու արձանագրության մեջ:

Վանկվանաց ձորակում՝ ժայռերով նեղված այդ հարթության վրա, 903 թ. Շապուհի Բագրատունի իր քրոջ Սյունեյաց տիկնիկ Մարիամի տեսչությամբ կառուցվել է Լուսավորչի անունը կրող գմբեթաձև եկեղեցի: Բացի գլխավոր եկեղեցուց, նրա հարավային կողմում կա գավիթ, որի արելետիկ մասում շինված են մի քանի խցեր, սրանց հարավում

մի բաղամակ եկեղեցի: Շապուհի Բագրատունի կառուցված է Սուրբ Գրիգոր եկեղեցին և այն պայծառորեն զարդարում, բազմա նվիրատվություններ անում միաբանների կարիքների համար: Այս անունի մասին վկայում է եկեղեցու գմբեթի յուսարարմանը և արևմտյան կողմերից փորագրված արձանագրությունը:

Փառք Աստուծո՛ւ, այսօր են գտնվում եւ Շ. Բագրատունու գործը շարունակող մարդիկ, որոնցից մեկն է Մարտիրոսի քաղաքի հայր գործառնատնի տնօրենը, որը հունվարի 6-ին, արդեն երկրորդ անգամ, դարձավ Վանկվանի խաչքարաբեր: Այդ օրը մեծ տոնախմբությամբ էր արժվարեցինք մեր հայրենիքը: Վաղ առավոտյան կատարվեց մատաղօրհներդ արարողություն, որին հաջորդեց սուրբ և անմահ Պատարագը ձե-

տանք Ս. Տիրատուր քահանայի: Հավարտ Սուրբ Պատարագի բախորդ դուրս եկավ եկեղեցուց և շարժվեց դեպի մտակա գետը, ուր և օրհնվեց գետի ջուրը: Հետաքրքրական այն էր, որ հավատացյալ ժողովուրդից ինքն իր համար վերցնում սրբած մյուսնուցաչուրը օրհնություն և բժշկական ակնկալելով: Խոնարհաբար անունը քաջցող խաչքարի բարեգործության արդյունքն էին նաև մատուցվող առատ գինին ու օրհնված մատաղը:

Վկայեցման նաեւ, որ եկեղեցին զարդարված էր գեղեցիկ ու խաչքարաբեր նոր դռներով, որոնք նույնպես մեր ժողովրդի հայրենասեր ու աստվածաբան զավակի նվերն էր Սուրբ Գրիգոր Լուսավորչի եկեղեցուն:

Արմեն ԱՄԲԵՆՆԵՐ

Գեղարքունյաց մարզի ան

# ՓԱՆԱՒՈՐԵԱԼ ԵՒ ՕՐՀՆԵԱԼ ՄԻՇՏ ՍՈՒՐԲԻ ԿՈՅՍ ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆ ԱՄԻՐԱՄ

«Երիտ խորհուրդն սուկալիս ի բեզ փեսանի Աստուածածին, յորհրիս աննիմանական, ծնունդ անարար, կուտարիս յեփ ծննդեան մնալով անապական. օրհնութեամբ գրեզ Աստուածածին մեծացուցանմք»  
Շարակնոց

Տակալվին Հին Ուխտի ժամանակաշրջանում հրեաները, որոնք պարսավում էին կուսական առաքինության կողմնակիցներն էին անարգուն գավակ չունեցող ամուսնական զույգերին, անընդհատ վիճարկում էին այն վկայությունը, որն արձանագրված էր Եսայի մարգարեի գրքում: «Ահա կույս յուրացի եւ ծնցի որդի, եւ կոչեսցեն զանուն նորա Էմմանուէլ»: (Ես., Է, 14):

Եկեղեցական ավանդության համաձայն՝ Սուրբ Գրքի յորձանատուներն ու թարգմանիչներին մեկը՝ Սիմեոն ծերունին, երբ կատարում էր Եսայի մարգարեության թարգմանությունը, «Ահա կոյսն յուրացի...» նախադասությանը հանդիպելով՝ տարակուսում է, թե կարող է՞ հրեաները եւ հեբրեաները չհավատան, ուստի եւ՞ ջնջում է: Սակայն աստվածային նախախնամությունը, իր տարակուսությունը հրաշալխանք պարագաների ներքո փարակելով, Սիմեոն ծերունին վերջնապես նախադասությունն այնպես է թարգմանում, ինչպես եր ցայժմ գրված է Յոթանասնից եւ նրա հիման վրա կատարված մյուս թարգմանությունների մեջ: Միով բանով, ամենուր շեռված է այն անփոխելի, միեւնոյս ժամանակ ղեկավարելի ճշմարտությունը, համաձայն որի կույսը որդի պիտի ծնի, որին Էմմանուէլ պիտի կոչեն, այսինքն՝ մի խորին տնօրինություն, որը նաեւ տարատեսակ թյուր ըմբռնումների դուռ է բացում...

Սակայն եթե ուղղափառ վարդապետության տեսանկյունից մտնեմք այդ հարցին, ապա մեզ համար պատասխանը միանշանակ կլինի՝ իսկ աստվածային մի տնօրինություն է, հետեւաբար այդտեղ տարօրինակ ոչինչ չի կարող լինել, չէ՞ որ եթե այդ Ամենակալ Աստուծո կողմից տրվող հատուկ ճշման է, ապա եւ այդ Որդու ծնունդն էլ պիտի բնականից տարբեր լինի. «Չի ա՛րդ լինիցի ինձ այդ, բանզի գայր ըն գիտնեմ: Պատասխանի եւս հրեշտակն եւ ասէ ցնա, Հոգի Սուրբ եկեսցէ ի թեզ, եւ գորութիւն Բարձրելոյն հովակն լիցի ի վերայ թո, բանզի եւ որ ծնալեղցն է ի թէ՛մ՝ սուրբ է, եւ Որդի Աստուծոյ կոչեսցի» (Ղուկ., Ա, 34-36): Արդ, քանի որ այդ ճշմար գերբնական ու անճանելի հրաշքի, իրողության նախանշանն է, ուստի եւ անընդունելի է այն անհիմն կարծիքների անկախությունը, որը կասկած է սերմանում Ամենակալը Աստուծո վկայության շուրջ, եթե Որդու ծննդյան ձեւը բնականն է, ուրեմն այդ ողված ճշման էլ չպետք է ճշակույթն էլ, եւ Որդուն էլ չպիտի «Էմմանուէլ» անվանել: Հետեւաբար, եթե Որդուն ծնողն էլ կույս չէ, ապա, ինքնին, ի՞նչ ճշման է այդ: Եւ եթե այդ ծնունդն աստվածային չէ, ի տարբերություն ուրիշների, ապա մարգարեի միջոցով Տեքն ինչո՞ւ է Էմմանուէլի գալստյան իբրեւ իրեղեն առհավատյալ ճշման սահմանում, այլեւ սկզբից եւեթ սուրբգրային բազմաթիվ պատկերներով է մարգարեություններով հայտնում Իր տնօրինության խորհուրդը (Եզեկ., ԽԴ, 2, 4-ան., Բ, 34-35)...

Նշենք, որ այս խնդրին անդրադարձել են Ընդհանրական Ա. Եկեղեցու հայրերից շատերը: Ի մասնավոր՝ պարոն է հիշատակել Ա. Բարսեղ Կեսարացու անունը, որը «Եսայու մարգարեության» իր հեղինակած մեկնության մեջ ոչ միայն անդրադարձել է այս խնդրին, այլեւ մանրամաստորեն ներկայացնելով հրեա միջավայրի վիճահարույց հարցերը՝ տվել է իր համոզիչ եւ սպառիչ պատասխանները:

Գալով խնդրի թեմային՝ պետք է նկատենք, որ եթե առաջին Ադամը կյանք ստացավ ոչ թե կնոջ ու տղամարդու բնական մեթոդներով, այլ Աստուծո արարչագործությանը՝ հողից, մայր երկրից (Ծննդ., Ա, 26-27, Բ, 7), ուստի Նոր Ադամի՝ Հիսուս Քրիստոսի ծնունդն էլ, որը խաթարված Առաջինի նորոգողն է (Հռոմ., Ե, 18-19, Ա Կորնթ., ԺԵ, 20-22 եւ այլն), կատարվեց աստվածային ամուսնի գորությունը: «Հոգի Սուրբ եկեսցէ ի թեզ, եւ գորութիւն Բարձրելոյն հովակն լիցի ի վերայ թո» (Ղուկ., Ա, 35), սակայն այժմ ոչ թե կույս հողից, այլ Ծնորինակ մի Կույսի զավակատնից, որպեսզի Էմմանուէլն այդտեղից ստացող մարդկային մարմնով, բնությամբ մեղանշական մարմնի ցնուն լինի (Հռոմ., Ը, 3, Եբր., Բ, 9-18): Հետեւաբար, եթե ծնվող Մանկան մայրը կույս չլիներ եւ այնուհետեւ կույս չմնար, ապա նրանից ծնված կատարյալ մարդն էլ կատարյալ Աստված չէր լինի, ուստի մարգարեի միջոցով Աստուծո տված ճշման ու հայտնություններն էլ անմիտառ, դեռ ավելին, ստապատիր կլինեին...

... Ընդհանրական Ա. Եկեղեցու ուղղափառ վարդապետությունն իր մեջ Ա. Մարիամ Աստվածածին մարմնի ներառում է հետեւյալ գլխավոր ճշմարտությունները.  
ա. Ա. Կույս Մարիամը, քառի բուն իմաստով, Հիսուս Քրիստոսի՝ Մարդեղացյալ Աստվածորդու մայրն է, ըստ այդմ՝ Աստվածածին.

բ. Նա միշտ կույս է, այսինքն՝ մինչ Հիսուսի ծնունդը, Նրա ծննդյան ժամանակ եւ Նրա ծնունդից հետո:

գ. Ա. Կույսը բոլոր երկնային արարածներին եւ սուրբերից բարձր է եւ առավել մտա Ամենասուրբ Երրորդությանը (եւ ոչ թե, ինչպես Հռոմի Կաթոլիկ Եկեղեցին է դավանում, գրեթե հավասար Եռադեմ Մի բնությանը Մի Աստվածությանը): Հետեւաբար Ա. Աստվածածինը՝ հանձնի Հարդական Եկեղեցու, Աստուծո մտա մարդկության եւ համայն աշխարհի առաջին բարեխոսն է:

Ահավասիկ այս ճշմարտությունների շարքում իր ուրույն տեղն ու ճշմանկությունն ունի Տիրամոր մշտնջենական կուտարյան վարդապետությունը, որը Ա. Մարիամ Աստվածածին արժանապատվության անքակտելի հատկանիշներն է:

Նախ եւ առաջ պետք է նշենք, որ թեեւ Աստվածածին կուսական մայրության վարդապետությունը Հայաստանյայց Ա. Եկեղեցու դավանաբանության պաշտոնական բանաձեւն է, եւս անհրաժեշտ է նշանակել, որ Աստվածածինը մշտնջենական կուտարյունը Հայոց Եկեղեցու ուսուցումների անքակտելի մասն է կազմում, որովհետեւ այդ կարի անհրաժեշտ ճշմարտությունը, ինքնված Հին ու Նոր Կտակարանների վկայությունների վրա, Գլխաբար ծովում էր քարոզվել է Գ. Տիեզերական ժողովի եւ

Ընդհանրական Ա. Եկեղեցու լուսարանի հայրերի կողմից: Ա. Մարիամ Աստվածածին կուսական մայրության խոստովանությամբ, իբրեւ բացարձակ եւ եական ճշմարտություն, իրենց աստվածաբանական վերլուծություններով հանդես են եկել Բ. Գ. Գ. Գ. Ե Ե դարերի տիեզերալույս հայրերը (Ա. Անբրոսիոս, Ա. Հուստինիանոս, Ա. Արսենիոս Ալեքսանդրացի, Ա. Եպիփան Կիպրիացի, Ա. Գրիգոր Նյուսացի եւ այլն): Վերջիններս, որպեսզի մարդկային մտքին հասանելի կերպով բացատրեն Ա. Կույսի մշտնջենական կուտարյան խորհուրդը, տարատեսակ համոզիչ հիմնավորումներից գաւտ, մասնամշտն են նաեւ աստվածաշնչային վկայությունները.  
ա. անկեզ մորեմին (Ելք, Գ),  
բ. Կարմիր ծովի միջով անցումը (Ելք, ԺԳ),  
գ. Գեղեթնի գեղմի վրա իջնող ցողը (Դատ., Զ, 36-40),  
դ. Ախարոնի ծաղկյալ զավակները (Թվեր. ԺԷ, 16-26) եւ այլն:

Սուրբ հայրերը մատնացույց են անում նաեւ մարդ արարածի խորախորհուրդ մտքի ծնունդները, գաղափարներն ու մտածումները: Ի վերջո, աստվածամեծ սուրբ հայրերը մասնամշտն են Բարձրյալ Աստուծո անհնարողությունը եւ ամենակալությունը. «Ան ի մարդկանն այդ անկար է, այլ առ յԱստուծոյ՝ ամենայն ինչ զօրարող» (Մատթ., ԺԺ, 26):

Հետեւաբար, ամենայն ուշիմություններ այս ամենը բնեկեցուց եւ վերլուծելուց հետո մեր տկար բանականությանը հանգում ենք այն հետևությունը, որ Ա. Մարիամ Աստվածածինը մայրն Ամենասուրբ Երրորդության Երկրորդ Դեմի Մարդեղացյալ Աստվածորդու, նա, որի վրա Սուրբ Հոգին իջավ, եւ որին Բարձրյալ Տերը հովանավորեց թե՛ Հիսուս Փրկչի ծնունդից առաջ, թե՛ Նրա ծննդյան ժամանակ եւ թե՛ Նրա ծնունդից հետո, անճանելիորեն կույս էր: Ահա այդ պատճառով էլ կուտարյան այլեւ դարձավ Ծնորինակ Ա. Աստվածամոր անվան մշտնջենական, անկողոպտելի թագն ու պսակը, աստվածային տնօրինության մշտամեն գրավակներ:

Ահավասիկ այս ճշմարտ վարդապետությունը, որը թաղարացիություն ստացավ 431 թ. Եփեսոսի Գ Տիեզերածողովում, որդեգրվեց ու զարգացավ Հայոց Եկեղեցու աստվածաբանները, շարակապակցների ու մատնագիրների կողմից՝ Ոսկեդարից սկսած՝ ընդհուպ մինչեւ ներկա ժամանակները:

Հավարտ բանի՛ պետք է նշենք, որ Ընդհանրական Ա. Եկեղեցու աստվածաբանական անդատանքի հաստատուն կաղնիներից՝ մարեմարությունը (Mariology), ինչպես նաեւ քրիստոնեական հավատքի մնացյալ ճշմարտությունների դավանաբանական բանաձեւերն անաղարտ ու անաղճատ վիճակով պահպանվեցին Հայաստանյայց Ա. Եկեղեցու եւ նրան դավանայից Արեւելյան մյուս Եկեղեցիների շնորհիվ: Նշենք նաեւ, որ մարեմարությունն իր բնական զարգացումն ապրեց քրիստոսաբանությանը զուգահեռ՝ սերտորեն, անքակտելի կերպով շողկապված լինելով վերջինիս:

Արքայր դպիր ԿԱՐԱՊԵՏՆԵՆ  
Գեղարցյան հոգևոր  
անարանի սան

# Փեպրվարի 14 ՏՅԱՆԵՆԴԱՍԱԶ

Տյանընդառաջ ճշմանկում է ընդառաջ գնալ Տիրոջ:

Երբ լրանում է մանուկ Հիսուսի քառասունյակը, Սուրբ Մարիամ Աստվածածինն ու նրա ամուսինը՝ Հովսեփը, Մանկան տանում են Երուսաղեմի տաճար՝ Աստուծո ընծայելու:

Եգիպտոսի գերությունից ազատվելուց հետո, մովսիսական օրենքի համաձայն, հրեաների անդրանիկ արու զավակները պետք է նվիրվեն տաճարին, այսինքն՝ Աստուծո ծառայելուն: Հետագայում այդ ծառայությանը կանչվեցին դեռահասները՝ Աստի սերունդը: Իսկ մյուսները, իրենց կարողության չափով, դեռահասների պետք է փրկագին վճարեին՝ իրենց անդրանիկ արու զավակի համար: Ահա այս կարգի համաձայն՝ Հիսուս տարվում է տաճար:

Երուսաղեմում Սիմեոն ամուսնու արդար ու աստվածավախ մի մարդ էր արարում: Ինչպես գրում է Լուկաս ավետարանիչը, նրան Սուրբ Հոգուց հրամայված էր մահ չտեսնել՝ Տիրոջ Օծյալին չտեսած: Ահա թե ինչ է ավանդված այս մասին:

Սիմեոնը մեկն էր այն 70 բարգամանից, որ ծնունդով էր Հին Կտակարանի հունարեն թարգմանությունը: Սիմեոնը թարգմանում էր Եսայի մարգարեի գիրքը: Երբ նա հասնում է գրքի 7-րդ գլխի 14-րդ համարին, որ սովում է.

«... Ահա կույսը պիտի հղիանա եւ որդի ծնի...», Սուրբ Հոգով նրան հայտնվում է, որ այնքան է ավարել, մինչեւ կատարվի այդ մարգարեությունը:

Շարունակելով ընթերցել Գլուխի Ավետարանը՝ տեսնում ենք, որ Սիմեոնը, Սուրբ Հոգով առաջնորդված, գալիս է տաճար, եւ երբ ծնողները բերում են Հիսուս Մանկանը, Սիմեոնը Նրան իր գիրկն է առնում, օրհնում է Աստուծոն եւ ասում. «Այժմ, ով Տեր, խաղալությանը արձակիր թո ծառային՝ ըստ թո խոսքի, որովհետեւ այքնքս տեսան փրկությունը թո, որ պատրաստեցիր բոլոր ժողովուրդների առաջ, լույս, որ կլինի հայտնություն հեթանոսների համար, եւ փառք՝

Իսրայելի թո ժողովրդի համար» (Ղուկ., Բ, 29-32):

Հիսուս Քրիստոս Աստուծոն ընծայվեց ոչ թե որպես հրեական մեկ ընտանիքի առաջնեկ, այլ ամբողջ մարդկության: Ինչպես դեռահասներին էր վերապահված հրեաների քահանայելը, այդպես էլ Հիսուս Քրիստոսի՝ տաճարին ընծայվելով՝ վավերացվեց Նրա՝ քահանայապետի ծառայությունն անբողջ մարդկության փրկության համար: Տաճարին Հիսուսին ընծայումով փրկագին վարձուրեց բոլորիս համար: Ահա այդ, չափազանց բանկ է այդ գինը, որ Հիսուսի արյամբ եղավ: Այն հեղվեց մեզ համար, հետեւաբար մենք, պատկանելով Հիսուսին, պարտավորված ենք հետեւել Նրան ու առաջնորդվել Նրա կամքով՝ ի երախտագիտություն այն մեծ գոհողության:

Սիմեոն ծերունու օրհնակով՝ մենք էլ Տիրոջն ընդառաջ գնալու իմաստությունը պիտի վաստակենք մեր կյանքով եւ ամեն պարագայում փառավորենք Աստուծոն:

Տյանընդառաջի տոնին եկեղեցում երգվող շարականներն էլ պատմում են ահա այս ամենի՝ Սուրբ Կույսից մարմնն ստացած Քրիստոսի՝ տաճար բերվելու, ընծայման մասին, գովերգվում է Սիմեոն ծերունին, հիշատակվում է մեր Տեր Հիսուս Քրիստոսի մարդամարտ խորհուրդը:

Նախատոնակին՝ փետրվարի 13-ի երեկոյան ժամերգությունից հետո, հավատացյալներից շատերը եկեղեցուց վաղուց մտնել են տանում տուն: Աստուծոն մտնելը՝ որպես Հիսուս Քրիստոսի՝ Կենդանի Լույսի խորհրդանշան, միաժամանակ ընտանիքին, մեթոդներին այդ Լույսով լուսավորելու ճգնույնն են այլարանում: Ուստի, իրական լույսը, ճշմարիտ լույսը, որ Քրիստոսի հավատքն է, ամեն պարագայում վառ պահելու ճգնումով է, որ պիտի կարողանանք Տիրոջն արժանավորապես ընդառաջ գնալ, այսինքն՝ մեր թեկուզ փոքրիկ ծառայությունն ընդունելի դարձնել Նրան:

Ահա, Կենդանի Արեգակին՝ Հիսուս Քրիստոսին, հավատացողը մյուսական արեւին կամ կայկին ու լուսինն պաշտամունք մատուցելու կարիք այլուս չունի, քանի որ այդ ամենի ստեղծողը եւ Մարդիչ Աստվածն է: Եւ Կենդանի Լույսին ճանաչողն այլուս մեկ ճշմարտության է հետամուտ, որը մեր Տեր Հիսուս Քրիստոս վկայեց այսպես. «Ես եմ աշխարհի լույսը, ով ինչ չեստեսցի է գալիս, խաւարի միջով չի քայլի, այլ կընդունի կենցաղ լույսը» (Յովհ., Ը, 12):

Աննա ԱՆՈՅԵՆ

# ՄԱՆՈՒԿՆԵՐԻ ՄԿՐՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Երբեմն որոշ մարդիկ, հետևելով բողոքական ճոր ուղղությունների կամ պարզապես ծանոթ չլինելով մեր Եկեղեցու պատմությանը, խորհուրդներին ու Սրբազան Ավանդությանը, փորձում են քննադատել մանկակրտությունը: Նրանց բոլոր տեսակետի դեմ է սույն հոդվածը:

Ընդհանրական Եկեղեցին մանուկների եւ մեծահասակների մկրտությունը երբեք չի առանձնացրել, որովհետև կատարվողը մույն խորհուրդն է: Եկեղեցին միշտ բույրավոր էր և պարտադիր էր համարել երեխաների մկրտությունը: Այս մասին խոսում է Լիոնի եպիսկոպոս Բ. Իրինեար (մահ.՝ 202 թ.). «Քրիստոս եկավ՝ Իր միջոցով բոլորին փրկելու, բոլորին, ասում են, որոնք վերստին ծնվում են Նրանից Աստուծո համար՝ մանուկներին, պատանիներին եւ ծերերին» (Ընդդեմ հերձ., 2, 22, 4, տես նաև՝ 5, 15, 3): Եկեղեցու ուսուցիչները Որդիին Աղբյուրանդարցին (մահ.՝ 254 թ.) խոսում է մանկակրտության մասին՝ որպես առաքելական ավանդության. «Եկեղեցին մանուկներին մկրտում ավանդությանը և ստացավ առաքյալներից» (Հռոմ. մեկն., գիրք 5, գլուխ 6):

252 թ. Կարթագենի ժողովը որոշեց. «Ոչ մեկին չպիտի գրկենք մկրտությունից եւ Աստծո շնորհից... Եթե այդպես պետք է վարվել բոլորի համեմատ, ապա առավել եւս մանկանց հանդեպ...» (Ս. Կիպրիանոս Կարթագենացի, մասնակ 46, Ֆիդի եպիսկոպոսին):

Մանուկների մկրտությունը բոլոր ինչ կեղեցիներում համընդհանուր փաստ է: «Գործը առաքելություն» կամ նկարագրություններ, որոնք, մեծահասակների հետ միասին, ենթադրում են մանուկների մկրտությունը:

Իսկ Հին Կտակարանի բոլոր այն իրադարձություններն ու կարգերը, որոնք Նոր Կտակարանում կատարվելիք փրկարար իրադարձությունների նախատիպն էին, իրենց մեջ երեխաներին էին ներառում: Մասնավորապես Նոր Ուխտի մկրտությանն ախառակալ-օրինակ են: Դրանցից մեկը Կարմիր ծովի միջով անցնելը էր, երբ Իսրայելի ամբողջ ժողովուրդը, մանուկները անգամ ծովով: Եւ որ դա մկրտության նախատիպն էր, ինչպես վկայում է Պողոս առաքյալը. «Չեմ ուզում, որ անգիտանաք, որ մեր հայրերը բոլորն էլ, ամալի առաջնորդության տակ էին եւ բոլորն էլ ծովով անցան եւ բոլորը, հետևելով Մովսեսին, մկրտվեցին ամալի ծովի մեջ» (Ա Կորնթ., Ժ, 1-2):

Մկրտության մյուս նախատիպը Հին Կտակարանում թլիպատությունն էր: Թլիպատությունը Աստծո ժողովրդի անգամ դառնալու նշան էր՝ ուխտի նշանը: Այն կատարվում էր տղայի ծննդյան ուրբերող օրը (Ծննդ., ԺԷ, 9-14): Ուրբ հավիտերանում նշան էր (այս սիմվոլիզմը բացահայտում է սուրբ Բարսեղ Կեսարացի իր «Վեցօրեայրում»): Այդ արարողությունը ցույց է տալիս,

որ մարդը նախասահմանված է հավիտենական կյանքի համար: Պողոս առաքյալը Կորնթացիներին ուղղված նամակում ասում է. «Նրանով դուք անձեռնագործ թլիպատությամբ թլիպատվեցիք հավատով, մերկանալով մեղանշական մարմնից, Քրիստոսի թլիպատությամբ, թաղվելով Նրա մկրտության մեջ...» (Կոր., Բ, 11, 12): Բերված օրինակները պարզորոշ ցույց են տալիս, որ մանուկների մկրտությունն ընդունված է եղել Եկեղեցու վաղ շրջանից եւ առաքելադիր է:

Մակաբյ արդյո՞ք մանուկների մկրտությունը նրանց ազատ կամքին բռնադատ է: Այս հարցին պատասխանելուց առաջ անհրաժեշտ է պարզել, թե ի՞նչ է կրոնական զգացումը, բնածի՞ր հատկությունն է, թե՞ հետագայում է ձեռք բերվում: Քրիստոնեությունը սովորեցնում է, որ կրոնական զգացումը հոգու գլխավոր հատկանիշն է: Նույնիսկ ոչ քրիստոնեական կրոնական ուսուցիչները համաձայն են, որ կրոնական զգացումը բնածին է, եւ այն պետք է արթնացնել, զարգացնել: Երեխաները հոգեւոր աշխարհին ավելի մոտ են կանգնած, եւ պատահական չէ, որ ավելի երջանիկ են: Նրանք պատկանում են իրենց Աստծուն ու Արարչին: Մեքե ամենեին էլ իրավունք չունենք նրանց գրկելու Փրկչի հետ հարաբերությունից: Չէ՞ որ մկրտության ժամանակ Աստված ինքն է գործում, ուստի մկրտությունը խորհուրդ է, այսինքն՝ այնպիսի սրբարար գործողություն, որով աստվածային շնորհ է հայցվում: Այսպիսով, մկրտությունն ի Քրիստոս կյանքի սկիզբն է, իսկ երեխաներին մկրտությունից գրկել՝ նշանակում է բռնի կերպով հեռացնել նրանց շնորհի ներգործությունից, այսինքն՝ խոչընդոտ համոզիտանալ նրանց կյանքի նպատակին ու նշանակությանը:

Երեխան, ինչպես եւ մեծահասակը, Աստծո մանուկությունն ու պատկերն է կրում: Հետեւապես՝ հոգեւոր կյանքի կարիք ունի: Եւ եթե ծնողները հոգածությամբ ու խնամքով են շրջապատում երեխային, կերակրում ու հագցնում նրան՝ չսպասելով այն տարիքին, երբ երեխան ինքն ախ, որ համաձայն է ուսելու ու խմելու, ապա ինչ՞ե՞ն, այլուի բավականացնեն նրա հոգու ամենակարևոր պահանջը:

Չմկրտված մարդը գտնվում է հավիտենական մահվան իշխանության տակ: Եւ քանի որ մարդը չգիտի իր մեղքերն օրը, պետք է մկրտվի որքան հնարավոր է շուտ:

Նոր Կտակարանում Քրիստոսի անմիջական կարգադրությունը կա. «Թույլ տվեք այդ մանուկներին եւ մի արգելեք, որ նրանք Ինձ մոտ գան» (Մատթ., ԺԺ, 14):

Մակաբյ Քրիստոսն սուտ տաճող միակ դուրը մկրտությունն է: «Եթե մեկը հոգու ու ջրից չձնվի, չի կարող Աստծու Արքայությունը մտնել» (Հովհ., Գ, 5):

*Հարություն ուրարակիր  
ՎԱԶՄԵՆՅԱՆ  
Հոգեւոր մեծարանի  
2 լսարանի սան*

# ՄԻՋԵԿԵԳԵՅԱԿԱՆ ՆՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

## ԱՂԱԿԵԱՅԻ ԿԱԹՈՒԿՆԵՐՆԵՐ ՄՊԱՍՈՒՄ ԵՆ ԻՐԵՆՅ ՆՈՐ ԱՌԱՋՆՈՐԴԻՆ

Անգլիայի կաթոլիկների պաշտոնական թերթը «Ինչո՞ւ ենք մենք սպասում» վերնագրով մի հոդված է հրատարակել, որտեղ համայնքի անդամները հարց են ուղղում Հռոմի պապին, թե երբ է նա Անգլիայի կաթոլիկներին նոր առաջնորդ նշանակելու: Թերթը քննադատում է Վատիկանի «Նախնադիպությունը» Անգլիայի եւ Վուլեյի նոր առաջնորդի նշանակման գործում՝ մինեույն ժամանակ պաշտպանելով Հյուսիսային Անգլիայի առաջնորդ 55-ամյա եպիսկոպոս Վինսենտի քեյնսթոնի: Հիշեցնենք, որ Անգլիայի նախկին առաջնորդ կարդինալ Բասիլ Հյունը մահացել է 7 ամիս առաջ՝ քաղցկեղի անբուժելի հիվանդությունից: Ինչպես, սակայն, «Westminster Record» թերթի գլխավոր խմբագիր հայր Քհունինգհեմըն է գրում, սա միակ դեպքն է, երբ այսպիսի ուշադրություն են նշանակել Անգլիայի նոր առաջնորդին: Նույնը տեղի է ունեցել 1963 թվականի հունվարին, երբ կարդինալ Վիլյամ Գոդֆրեյի մահվանից հետո նոր առաջնորդ կարդինալ Ջոն Հեյմանն այդ պաշտոնին 8 ամիս հետո է նշանակվել:

## 2000 ԹՎԱԿԱՆԻ ՄԵԳԵՄԵՐՆԵՐ 3-ԻՆ ՎԱՏԻԿԱՆՈՒՄ ՏԵՆԻ ԿՈՒՆԵՆԱ ՍՐԱԳՎԱՍՄԱՆ ԱՐՄԱՐՈՒԹՅՈՒՆ

Վատիկանի սրբադասման համապատասխան հանձնաժողովի նախագահ արքեպիսկոպոս Խոսե Մարալիա Մարտինսը Նորին Սրբություն Հովհաննեսն - Պողոս Բ պապի ներկայությամբ ընթերցել է 18 անուն, որ ենթակա է սրբադասման եւ կանոնականացման: Դրանց մեջ են Պիոս Թ պապը, որը պետք է սրբացվի, եւ Հովհաննես ԻԳ պապը, որը դասվելու է երաշխավոր կարգը: Հանդիսավոր այդ արարողությունը տեղի է ունենալու 2000 թ. սեպտեմբերի 3-ին:

## ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԻՍՐԱԵՆԵԼ ՀԻՎԱԿԱՐԿԵԼ Ե ՀՈՒՍԻ ՊԼՈՒԵ ԵՐՈՒՍԱԿԵՄ ԿԱՆԵՐԵԼԵՐ ԱՅՅԵԼՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՅՈՒՅՅԸ

Իսրայելի պաշտոնական աղբյուրները հրապարակել են Հովհաննես-Պողոս Բ պապի, սույն թվականի մարտ ամսին, Երուսաղեմ կատարելիք ուխտագնացության մանրամասները: Հռոմի պապը Իսրայել է ժամանելու Հորդանանով: Մարտի 20 - ին նա կանգ է առնելու Ամմանում եւ այցելելու է Նեքտ սաբբը, որտեղից Մովսես մարգարեն դիտել է Ավետյաց Թերկիքը, եւ Հորդանան գետը՝ Քրիստոսի մկրտության վայրը: Հաջորդ օրը՝ մարտի 21-ին, Նորին Սրբությունը ժամանելու է Թել Ավիվ, որտեղ մասնաճյուղի են Իսրայելի նախագահ Էզեվ Վեյզմանը եւ վարչապետ Էհուդ

Բարակը: Ապա նա մեկնելու է Երուսաղեմ, որտեղ այցելելու է իսրայելացիների եղենի բանագարանը: Նա կանգ է առնելու քաղաքի եւ իսրայելյան, եւ արաբական մասում, ապա հանդիպում է ունենալու քաղաք երեք հիմնական կրոնական համայնքների առաջնորդներին: Երբ այցելելու է Բեթղեմեմ՝ աղբյուրը համար Տիրոջ Ծննդյան Եկեղեցում, որը գտնվում է պաղեստինյան տարածքում: Նա հանդիպում է ունենալու մանուկ Յասեր Արաֆատի հետ, որից հետո մեկնելու է Գալիլիայի իյուսիս՝ կանգ առնելով Կափառնիայում եւ Տիրեբիայում: Նա քաղաք է խոսելու շուրջ 50.000 երիտասարդների համար: Մարտի 25-ին, ծրագրի համաձայն, պապն այցելելու է Նազրեթ, որ տեղի տաճարում հանդիսավոր Պատարագ է մատուցելու Ավետման տոնի առթիվ: Սա Հռոմի Քահանայապետի 2-րդ այցն է լինելու Սուրբ Երկիր: Նա շահին անգամ՝ 1964 թվականին, Պողոս Զ պապն է այցելել Երուսաղեմ: Վատիկանը, վիրավորված իսրայելյան կառավարության այսօրինակ փութկոտությունից, հայտարարել է, որ քանի դեռ պաշտոնական Վատիկանը չի հրապարակել պապի այցելության ժամանակացույցը, ոչ մի ուրիշ ժամանակացույց չի կարող վավերական լինել:

## ՀՈՒՍԻ ՊԼՈՒԵ ՆՈՐ ԿԱՐԴԻՆԱԼՆԵՐԻ ԱՆՈՒՆՆԵՐ Ե ՏԱԼՈՒ

Համաձայն իտալական «11 Messagero» թերթի հաղորդած տեղեկությունների՝ Նորին Սրբություն Հովհաննես-Պողոս Բ պապը շուտով գումարելու է թվով 8-րդ համաժողովը, որի ընթացքում հայտարարելու է նոր կարդինալների անունները: Նա արդեն կարդինալական աստիճանի է բարձրացրել 153 պապող կարդինալներից 126-ին: Մտացույց 27-ից 26-ն ընտրվել են Պողոս Զ-ի, եւ մեկն էլ՝ Հովհաննես ԻԳ-ի կողմից: Թերթը կարծիք գրկել ստացող հավանական թեկնածուների մեջ հիշատակում է սրբադասման հանձնաժողովի նախագահ արքեպիսկոպոս Խոսե Մարալիա Մարտինսին, կարդինալ կրթության հանձնաժողովի նախագահ արքեպիսկոպոս Չենոն Գրոշոյեկսին եւ արդարության ու խաղաղության հանձնաժողովի նախագահ, ազգայնական վիետնամացի, արքեպիսկոպոս Նոյեմ Կան Թոնսանին: Երեսարարվում է, որ կարդինալական աստիճան կարող են ստանալ մանուկ այն մեծ թեմաների առաջնորդները, որոնց արքունիքը պատանակողներն համարվում են նաև կարդինալական: Սրանց թվում են Լիոնի, Իռլանդիայի, Թուրինի, Չագրեթի, Սան Մալոյի (Բրազիլիա), Սառ Մալոյարդի Բահիայի (Բրազիլիա), Բուենոս Այրեսի (Արգենտինա), Սանթիագոյի (Չիլի), Բոգոտայի (Կոլումբիա), Բոմբեյի (Հնդկաստան), Նգեկի (Նայրոբի) եւ Աբիջանի (Փոլսկրյա ափ) առաջնորդները:

## ՈՒՌԱԿԱՆ ՈՒՂԱՎՈՒՆԵԿՆԵՐԻ ԿԱՆՈՒԳԱՅԻ ԹԵՄԻՆ ԵՆ ԱՂԱԿԱՐԱՆՅՑ ԿԵՐԱԿԱՐՉՎԵԼ ԵՆ ՍՐԱԳՎԱՍՄԱՆԵՐ

Կալուզայի գեղարվեստական քանդակար 17-րդ դարի մի քանի արժեքավոր սրբավայրերի երեւելու վերադարձնելու Կալուզայի թեմին: Հանդիսավոր այդ արարողությունը տեղի է ունեցել Կալուզայի շրջանի մահաբազալետ Վալերիի առաջնորդ արքեպիսկոպոս Կլիմենտն օրինել է Սուրբ Երրորդության, Ս. Նիկողայոս Սքանչելագործի, Ս. Գեորգիի եւ Ս. Մարիամ Աստվածածնի սրբապատկերները: Արարողությանը ներկա գտնվող Կալուզայի շրջանի մահաբազալետ Վալերիի Նուդարենկոն ասել է, որ «պիտիքի իշխանությունները՝ աշխարհ և ամեն այն ամենը, ինչը երկար տարիներ չեն կարողացել անել»:

## ԻՌԱՆՎԱԿԱՆ ԵԿԵՂԵՑՈՒ ԳՆԱՄՄԱՐԸ


Իրանցիայում անցկացված նոր հետազոտության արդյունքները պարզել են, որ հարյուրամյակների եկեղեցի գնալու հաճախակալությունն ամենացածր աստիճանի վրա է: Հետազոտությունները ցույց են տվել, որ Իրանցիայի Հանրապետության բնակչության միայն կեսն է այցելում եկեղեցի շաբաթ մեկ անգամ (սա անցյալ տարվա համեմատ 13 %-ով քիչ է): 10 %-ը եկեղեցի է հաճախում այնքան մեկ անգամ, 5 %-ը միայն տոներին, եւ 13 %-ը ընդհանրապես եկեղեցի չի հաճախում: Իրանցիայի բնակչության 94 %-ը ներկայացնել է իբրեւ կաթոլիկ, 2 %-ը՝ իբրեւ բողոքական, եւ 3 %-ը՝ իբրեւ արեւիտեալ եւ կամ այլ կրոնների դավանողներ:

## ՇՎԵԿԻԱՅԻ ԼՅՈՒԹԵՐԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՆ ԱՆՍՏՎՈՒՄ Ե ՊԵՏՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Շվեդիայի Լյուբեքական Եկեղեցի պաշտոնապես անջատվելու է պետությունից, որն այս կարգավիճակի մեջ է եղել շուրջ 500 տարի: Այս որոշումը երկրի խորհրդարանի կողմից ընդունվել էր դեռեւս 1995 թվականին եւ միայն նոր հարգաբանական էր, որ այն կյանքի է կոչվելու: Եւ կառավարությունը, եւ բարձրաստիճան հոգեւոր այրերը համոզված են, որ Շվեդիան, որի բնակչության 90 %-ն անդամ է Լյուբեքական Եկեղեցու, շահելու է սրանից: «Սա երկրի բաժանում է կամ էլ երջանիկ ապահարգանք... այն զարգացել է երկար տարիներ, եւ դա շատ լավ է», - հայտարարել է Շվեդիայի մշակույթի նախարար Կարլ-Էրնար Նորդինգը: Մակաբյ Շվեդիան էլ չի կարող չաչի ընկնել իր հավատացյալների եկեղեցի հաճախելու քաղաքի նկարագրակով: 100-ից միայն մեկն է, որ ամեն շաբաթ այցելում է եկեղեցի: Իսկ մոյնքերը ամսին հեռախոսով անցկացված հետազոտությունների արդյունքում պարզվել է, որ բնակչության մեծամասնությունը եկեղեցի է հաճախում տարին ընդամենը մի քանի անգամ:

## ՇՎԵԿԻԱՅԻ ԼՅՈՒԹԵՐԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՆ ԱՆՍՏՎՈՒՄ Ե ՊԵՏՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Լրագրող Բարկեն արկ ՆԱՅՄԱՆԻ



«Ի ծո՞ւր, հէ՛ք մահկանացու, Տաճար կըմբռնիս: Մանրուղը՝ ուրիշ կը բարչունաս» քեզ կը մրցնէ Սրբաբանէ մը ներս, ուր Հայ ժողովուրդը պահ է փութեր իր Հոգին:

ԿՈԹՈՂԱՅԻՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

Ասորիկ ԳԵՒՈՐԳԵԱՆ, «ՀԱՅ ՄԱՆՐԱՆԿԱՐԻՉՆԵՐ», մատենագիտություն, 13-19-րդ դդ., Կահիրե, 1998:

Մերայ Աշտոցի անվ. Մատենադարանի գիտխորհրդի որոշմամբ եւ Կահիրեի Հայ բարեգործական ընդհանուր միության Սաթեմիկ ճ Չագր հիմնադրամի միջոցներով լույս է տեսել հայ մանրանկարիչների մի կոթողային տեղեկագիր, որ կազմել է Մատենադարանի երկարամյա եւ վաստակաշատ աշխատակից, արվեստագիտության թեկնածու Աստղիկ Գեորգյանը: Գիրքն ընդգրկում է 464 մանրանկարիչների համառոտ կենսագրություններն ու նրանց մանրանկարների մատենագիտությունը (մեկ հատուկանկարչի պատկերի վերատպումը եւ հարակից կարեւոր տեղեկությունների նշումով):

Հրատարակի վրա է երկար սպասված մի գիրք, որը ան-

Ավերիք ԻՍԱՀԱԿՅԱՆ

ԲԵԹՎԵՆԵՍԻ ԱՅՐԻ ՍՈՒՐԲ ՄԱՆԿԻԿԸ

Լեռների լանջում- քարայրի խորքում Շողում է կրակ երկնային սիրո Կայծերով վառված մի անորոգ կյանքի, Շողում է կրակ - այնպեղ հավիտյան Լույսը չի հանգչում, Հույսը չի խաբվում:

Ներս մրիիր այրը - հովիվ ու գանձեր, Գառնիքի մսուր - անշուք խանչարուր, Ահա Մանկիկը անմեղ ու անքիծ Ժպտում է պայծառ - սեր է մեզ շնչում:

Ահա լալիս է - այդ Նրա սիրուն է, Որ կյանքի շնքից՝ ծաղիկ օրերից Մարդկանց վշտերի համար անվում, Մարդկանց մեղերի հանդուրժումն աղերսում:

Անկեղծ գոջումով, մարտի արցունքով Խոնրիկի, ընկեր, համբուրիքի Նրան,- Նա քեզ կնեք, Նա քեզ հույս կրա, Եւ դու գորացած կրիքը խաչը,- Էլ շրթա չկա, Էլ արյուն չկա:

ԱՎԱՆՑ ԳՅՈՒՂԸ ԵՒ ՄԱՆՐԱՆԿԱՐԻՉ ԶԱՔԱՐԻԱ ԵՐԵՅ ԱՎԱՆՅԻՆ

Վան քաղաքից հյուսիս-արեւմուտք՝ գեղատեսիլ Վանա ծովակի ափին է գտնվում Ավանց գյուղը: Առաջին անգամ այն հիշատակվում է 4-րդ դարից: Տեղական ավանդույթները Ավանցի վաղագույն շրջանի պատմության որոշ դրվագներ կապում է Ներսես Ա Պարբե (մոտ 329-373 թթ.) հայոց կաթողիկոսի անվան հետ: Ըստ ավանդության՝ երբ Արշակունյաց կործանումից հետո Ս. Ներսես հայրապետը շրջում էր Վասպուրական աշխարհում, այցելում է Ավանց, որոշ ժամանակ հանգրվանում է այդտեղ եւ հիմնում տեղի եկեղեցին (Ս. Հովհաննես), ապա հետագայում առաջ օրինում է գյուղը ու նրա բնակիչներին:

Մտարան, 2 Մաշտոց, 1 Աղոթամատույց եւ 2 հատակտոր: Այդ ձեռագրերում պահպանվել են հարյուրից ավելի ինքնատիպ մանրանկարներ: Նկարչի կենսագրության որոշ մանրամասների մասին

հետեւյալ տողը. «Կազմեցաւ ձեռամբ Չաքարա իրիցու մեղապարտի Վանեցոյ»: Նրա քահանա լինելն առաջին անգամ այստեղ է հիշատակվում: Ուշագրավ է, որ իրեն անվանում է ոչ թե Ավանցի, ինչպես այդ անուն էր նախորդ շրջանի հիշատակարաններում, այլ Վանեցի:



1610 թվականին նա արդեն Ջուղայում էր, իսկ 1611 թվականին՝ Քաղաք գյուղում, որը գտնվում էր Սյախանի մոտակայքում: Այստեղ նա մի Ավետարան է նկարագրում եւ հիշատակարանում գրում շահաբասյան բռնագաղթի մանրամասների մասին:

1618 թվականին Չաքարիայի բազմաթիվ աշակերտներից մեկը՝ Հովհաննես սարկավագը, ավարտելով այն Ավետարանը, որ սկսել էր իր ուսուցիչը, հիշատակարանում գրում է. «...գայա Աետարանս,

Ավանցն իր դարավոր պատմության ընթացքում եղել է Վան քաղաքի գլխավոր մականագիտար: Նրա բնակիչների մեծ մասը վարպետ մավաշինարար էր եւ փորձառու մավավար: Անգամ փորձրկուտ եղանակին, զիշերով, առանց կողմնացույցի կարողանում էին ծով դուրս գալ, մավաշիկ հարկավոր ուղղությամբ եւ անփորձանք ափ հասնել: Գյուղի բնակչության մի մասն էլ զբաղվում էր լճի ջրից աղ (բորակ) ստանալու արհեստով եւ որպես վաճառքով: Համարվում էր, որ բորակագործն է սովորեցրել Ս. Ներսեսը:

Վանա լճի մակերեսի հաճախակի բարձրացումն պատճառով Ավանցը բազմիցս ենթելվել է, ապա նորովի կառուցվել: Շատ կառույցներ, մնալով ջրի տակ, անդրած կործանվել են, վերջինը գյուղի նշանավոր եկեղեցին էր: Ս. Հովհաննեսը, որը ջրատույզ եղավ 19-րդ դարում:

Միջին դարերում Ավանցը եղել է գրչության կենտրոն, իսկ դա նշանակում է, որ աշխարհիկ գրադուներին գուղընթաց ծաղկել է նաեւ հոգեւոր կյանքը: 14-րդ դարում, Ս. Հովհաննես եկեղեցու հովանու ներքո, Վարագա վանքի միաբաններն ընդօրինակել են մեկնողական ու ծիսական բնույթի մի քանի մատյաններ: Բայց 14-րդ դարից առաջ եւ դրանից հետո՝ մինչեւ 16-րդ դարը, Ավանցում ընդօրինակված որեւէ ձեռագիր մեզ չի հասել: Եւ միայն 16-րդ դարի վերջից է, որ ի հայտ են գալիս Ավանցում ընդօրինակված, վերանորոգված եւ նկարագրված Ավետարանները: Զեռագրաստեղծման արվեստի վերագործողը կապվում է առաջին հերթին Չաքարիա Ավանցու ժամանակի նշանավոր մանրանկարչի, գրչի, ձեռագիր մատյանների հմուտ վերանորոգողի անվան հետ: Նրա ստեղծագործական ժառանգությունը պատկանելի է, մեզ են հասել նկարագրող 18 Ավե-

ն մեզ հայտնում իր իսկ հեղինակած կամ վերանորոգած ձեռագրերի հիշատակարանների հակիրճ տողերը: Չաքարիան ծնվել է 16-րդ դարի երկրորդ կեսին Վասպուրականում՝ հավանաբար հենց Ավանց գյուղում: 1595 թվականին նկարագրողը երկու Ավետարանների հիշատակարաններին իմանում ենք հետեւյալը. նրա հայրը՝ Հովհաննեսը, քահանա էր, իսկ մայրը՝ Ուլուխաթունը, մահացել էր դեռեւս այն ժամանակ, երբ Չաքարիան տակալին մանուկ էր, եւ նա մեծացել էր հոր խնամքով: Այս մաքարիան հիշատակում է իր կնոջը՝ Մահմուտին, եւ տալիս է իր հոգեւոր հոր եւ ուսուցչի անունը՝ տեր Հակոբ Ջուղայեցի: Տարակույս չկա, որ նշված Հակոբը մեծանուն մանրանկարիչ Հակոբ Ջուղայեցին է, քանի որ նա 1592 թվականին եղել է Ավանց գյուղում եւ այդտեղ ձեռագիր է ընդօրինակել:

Հայտնի տեղեկությունը 1597 թվականից է: Չաքարիան հիշատակում է իր նորածին որդուն՝ Կարապետին, եւ իր ուսուցիչը՝ Ամանին: Նշում է, որ այդ տարի մահացել է իր եղբոր՝ Այշիքեյի կինը: Պարզվում է, որ նա նաեւ Նուրբա անունով բույր է ունեցել: Նույն հիշատակարանում գրում է նաեւ իր հորեղբոր՝ Խյաթի մասին:

1600 թվականին մահանում է Չաքարիայի հայրը, իսկ 1604 թվականին նա դառնում է Ծահ Արանի կազմակերպած հայոց բռնագաղթի ակնատեսն ու գոհը: Սակայն այս դաժան հարվածը չի կտրում նկարչի ստեղծագործական եռանդը, եւ նա շարունակում է աշխատել նաեւ տարագրության մեջ: 1608 թվականին Չաքարիա Ավանցին Սյախանում վերանորոգում է մի Մաշտոց, որի հիշատակարանում թողնում է

Վանեցի Տեր Չաքարայ վարպետի ասել, այն էր սկիզբն արարել, բոլորն ամեն ծաղկել էր, անարինականքն նկարեաց, ապա ողորմած հոգին վախճանեցաւ: Չաքարիան այդ աշխատանքը կատարել էր 1615 թվականին, ինչը պարզվում է մույն այդ ձեռագրում իր իսկ բողած գրությունից: 1616 թվականին նա դեռեւս ողջ էր: Այդ թվականին նա վերանորոգում է մի Ավետարան եւ բող- լում իր հիշատակագրությունը. «Գրեցաւ սակաւ յիշատակս... ձեռամբ Չաքարայ Վանեցոյ իրիցոս», իսկ դա նշանակում է, որ վաստակաշատ արվեստագետը կրկնել է իր մահկանացուն 1617 թվականին:

Չաքարիա Ավանցու ձեռագրերն այսօր գտնվում են աշխարհի տարբեր գրադարաններում ու մատենադարաններում, իսկ դրանցից 9-ը մաշտոցյան Մատենադարանի լավագույն մատյաններից են:

Չաքարիա Ավանցին ստեղծագործում էր մի ժամանակաշրջանում, երբ հայ կերպարվեստը նկատելի փոփոխություն էր կրում՝ միջնադարից աստիճանական անցում կատարելով դեպի նոր շրջանի արվեստ: Հայ իրականության մեջ նոր սկզբնական արվեստային գեղանկարչությունը, ինչպես նաեւ հայ տպագիր գրքի գոյությունը որոշակի ազդեցություն էին ունենում նաեւ մանրանկարչության վրա: Չաքարիայի մոտ թեւ նկատելի են այդ ազդեցությունները, սակայն նրա ստեղծած պատկերագրական համակարգը հավատարիմ է Վասպուրականի մանրանկարչության հնավանդ գեղարվեստական սկզբունքներին:

Ավեր ԱՎԵՏԻՍՅԱՆ



# ՔՐԻՍՏՈՆԵԱՅ ԿԵՆՏՐՈՆԻ ՀՐԱՏԱՐԱՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 1999 ԹՎԱԿԱՆԻՆ

Ինչպես նախորդ տարիներին, 1999 թվականը եւս հրատարակչական առումով արդյունավետ եղավ Ս. Էջմիածնի Քրիստոնեական դաստիարակության եւ քարոզչության կենտրոնի համար: Հրատարակվեցին ինչպես տոնախոսական եւ ճանաչողական քարոզչորհրակներ, այնպես էլ մեծ ու փոքր գրքեր: ԲԳԲԿ-ի հրատարակությունները սովորաբար անվճար բաժանվում են կրոնի ուսուցիչներին, առաքվում Հայաստանի բններ, ուսումնական հաստատություններ եւ այլուր: 1999-ին հնարավոր եղավ ոչ միայն նոր գրքեր տպագրել, այլև վերահրատարակել նախորդ տպագրությունները, որոնք մեծ պահանջարկ ունեին. սակայն փոքր տպարանակի պատճառով մատչելի չէին շատերին: Ստորև ներկայացնում ենք ԲԳԲԿ-ի 1999 թվականի հրատարակությունների ցանկը եւ տպարանակները:

- Գրքեր եւ գրքուկներ
- Մանուկ Կակույան Կյուրիցի. «Երկնքի ճանապարհը» (2.000)
- Հովհաննես Արճիշեցի. «Մեկնություն Պատարագի» (2.000)
- Պողոս պատրիարք Աղրիանուպոլսեցի. «Խրատի բանգարան» (2.000)
- Հայկանուշ Մեսրոպյան. «Ընտրանի առյթների եւ պատգամների. քաղառ Ամենայն Հայոց կաթողիկոս Ն. Ս. Ս. Տ. Տ. Գարեգին Առաջինի Հայրապետի գրական ժառանգությունից» (5.000)
- Աշխատասիրությանը Արամ Գլխույանի. «Տոն Ծննդյան եւ Աստվածահայտնության» (5.000)
- Քարոզչորհրակներ
  - «Տյառներդարան» (10.000)
  - «Մեծ պահք» (10.000)
  - «Հարություն» (30.000)
  - «Սըրտություն» (20.000)
  - «Դրոշմ» (20.000)
  - «Հաղորդություն» (20.000)
  - «Ապաշխարություն» (20.000)
  - «Պատկ ամուսնության» (20.000)
  - «Չեղմաղություն» (20.000)
  - «Վերջին օժոն» (15.000)
  - «Ծննդավոր Ամանոր եւ Սուրբ Ծնունդ» (50.000)
- Ամենօրյա աղոթագիրք (55.000)
- Եկեղեցական պատկերազարդ օրացույց (3.000)

Վիզեն արկ. ՂԱԶԱՐՅԱՆ  
ԲԳԲԿ-ի հրատարակչական աշխատանքները համակարգող

## ՄԵԿԵՆՈՒԹՅՈՒՆ

### Մարթոս վարդապետ Չուդախեցին (15-րդ դար) Ավետարանի «ճրագը չեն վառում ու կարասի զակ դնում, այլ աշտանակի վրա» (Մատթ., է, 15) խոսքի մասին:

Քանի որ Տեբը բահամաներին ճրագ անվանեց, ըստ այսմ. «ճրագը չեն վառում ու կարասի տակ դնում» (Մատթ., է, 15), ուստի պարտավոր եք նրա հատկությունները ձեր անձներում ունենալ: Նախ, ինչպես Տեբն է առում, «չեն վառում», որովհետև հանգամ ճրագը ճրագ չի կռվում, այլ ինչ-որ անոր, այդպես էլ բահամաները պետք է բարեգործությանը վատ լինեն, ըստ այսմ. «Թող այդպես փայլի ձեր լույսը մարդկանց առջև» (Մատթ., է, 16):

Երկրորդ՝ ճրագի վատ լինելու համար երեք բան է հարկավոր. առաջին՝ պատույց, երկրորդ՝ ձեռք, երրորդ՝ կրակ, այդպես էլ բահաման պետք է ունենա մաքուր սիրտ, ինչպես բամբակը, ել բարի ընթացք, ինչպես պարարտ ձեռք, եւ երրորդ՝ ուղղափառ հավատք. որով կյանքի անճակով լույս կլինի:

Երրորդ՝ վաճառող ճրագը կարասի տակ արագ հանգում է. այդպես էլ երբ կատարյալ բահաման մտքի մեջ է ընկնում, արագ կորչում է այն, ինչը հագել էր:

Չորրորդ՝ ճրագը բարձր, աշտանակի վրա է դրվում, ինչպես Տեբն է առում (Մատթ., է, 15, Մարկ., Գ, 21, Գով., Ը, 16, ԺԱ, 33), այդպես էլ բահաման պետք է հեռանա աշխարհայինցի եւ առաքիլությանը բարձրանա, որպեսզի առաքիլությանը ամենքին գերակայեցի:

Հինգերորդ՝ ճրագը տանը եղող ամենքին լույս է տալիս. այդպես էլ բահաման պետք է եկեղեցում եղող ամենքի համար աղոթքներով Աստուծոց ողորմություն բերի:

Վեցերորդ՝ տանը եղած ամենքի աչքերը ճրագին են նայում. այդպես էլ ժողովուրդը բահամային է նայում, քանի որ եւ ճրագը շինության եւ կործանման պատճառը, որովհետև տեսնելով բարին՝ քարի են լինում, եւ [տեսնելով] չարը՝ բարուն հակառակ:

Յոթերորդ՝ քանից ճրագը հանգցնում է, ուստի դռները փակում են, որպեսզի չհանգչի. այդպես էլ բահամայի սրբությունը կորչում է, երբ նրա զգայարանները բացվում են մարմնական պատերի

առջև, [որովհետև] այնժամ օդային քամին՝ աստաման, մտնելով հանգցնում է նրա լույսը:

Ութերորդ՝ երբ ճրագը հանգցում է, տանը եղող ամենքը մոռոպում են, քեպետ բոլորն աչք ու տեսողություն ունեն, այդպես էլ՝ երբ բահաման չարի մեջ հաստատվում է, ժողովուրդը կորչում է՝ էլ ավելի մոռոպելով նույն չարիքի մեջ, ուստի մարգարեն ասում է. «Նրա արյունը քո ձեռքից են պահանջելու» (Եզեկ., Գ, 18):

Իններորդ՝ ճրագի լույսը վեր է ընթանում ու ոչ վար. այդպես էլ բահաման մտքի հայացքը պետք է Աստուծոց ուղղված լինի, եւ երկրաբար խորհրդով պետք է չկործանվի, այլ վերինը խորհի, ուր Քրիստոսն է:

Տասներորդ՝ ճրագը երկու պատիվ ունի. մեկը՝ որ լուսավորում է, մյուսը՝ որ բարձր տեղում է դրված: Իսկ հանգամ ճրագը՝ երկու անարգություն է ստանում. մեկը՝ երբ գետին ընկնելով շրջվում է, եւ մյուսը՝ երբ աղտոտի գույնով սեւացած է լինում: Այսպես էլ բահամաները, երբ ուղի են ընթանում, ըստ առարայի, երկու պատիվ են արժանանում (հիմն. Ա Տիմ., Ե, 17), մեկը՝ այստեղ մարմնավորը, մյուսը՝ հանդերձայում անպատմելին: Իսկ երբ ընկնում են վատ գործերի մեջ, երկու պատիվ են ընդունում. մեկը՝ այս աշխարհում աղտոտի անպատվությունն ու բոլոր մարդկանցից ծանակվելը, եւ մյուսը՝ հանդերձայ կյանքում [իտեղյալ խոսքերին արժանանալը]. «Չար է վատ ծառն» (տես Գով., ԺԺ, 22), նաեւ. «Այն ծառան, որ գետի իր տիրոջ կամքը, բայց նրա կամքի համաձայն չի պատրաստում, շատ ձեռ կուտի» (Գով., ԺԲ, 47): Ուստի աղաչում են, ձեր ամենքը պատրաստ պահեք, որով Քրիստոսի առաջ կլինեք ճշակներ, ուլեր արժանի չեն ամոքի:

Սեբ Տեբ Հիսուս Քրիստոսի ճշակով, Ում հեռ Չորր, միեւնույն ժամանակ եւ Սուրբ Հոգուն վայել է փառք հավիտյանն, ամեն:

Աշխարհաբարի վերածեց Վիզեն արկ. ՂԱԶԱՐՅԱՆԸ

## ԽՐԱՏԱԲԱՆ

Ինչպես որ չկա ավելի մեծ չարք, քան հպարտությունը, այդպես էլ չկա ավելի մեծ բարքը, քան խոնարհությունը: Որովհետև անասին Աստուծո ու մարդկանց առաջ արելի է դարձնում, իսկ երկրորդը՝ սիրելի ու հանելի: Առաջինը, հանգիստ չլսելով, փրատակցում է, երկրորդը՝ անվերջով խաղաղությանը հանգույցանում:

Եթե մարդ խորհի, քի ինքն ինչ էր առաջ, ինչ է այժմ եւ ինչ է լինելու ապագայում, քննալի կարողանա հպարտանալ: Քանի ակիքն անարգ նյութից է, ծնունդը՝ ցավերով, ապրելը՝ փրատակցումով, իշխանությունը՝ անօգուտ, փառքը՝ վաղարքատ, կյանքը՝ կարճամյա, մահը՝ հարկադիր, մարմինը՝ սպախանացու եւ որդեկի կերակուր: Այս բոլորից եւ այլ բաներից իս մեղք դուրսով կարող է իր ընտանյալ թշխան լինող հասկանալ եւ խոնարհ դառնալ:

Խոնարհի քարի ու շարերին օգրակար գործը սովոր է ծածուկ անել՝ գովություն չհռչակելու համար, քանից Տիրոջից է ակնկալում հարուցումը սրանում: Իսկ հպարտը, մի փոքր քարի գործ ուր անում է, ցանկանում է հրապարակել, որպեսզի մարդկանցից գովապնդեր սրան՝ իբրև իր գործերի վարչ, ուստի եւ Տիրոջից վարչապարտություն չի սրանում: Երբ խոնարհի իր մասին գովաբան է լսում մեկից, անաչում ու ցրտանում է, իսկ հպարտը գոռոզանում ու բերկրում է եւ կանանում էլ ակնկալ լսել:

Նա է հեզն ու խոնարհը, ով քեպեր կարող է վիճելանդի լինել իր զնն արված անհրավորությունների համար, քայց արվածավախ երկյուղածությանը ներում է: Իսկ հպարտը մի փոքր հանգստի համար ջանում է վրեն լուծել, որպեսզի մեղք երես:

Համբերությունն արհուրյան այն գործությունն է, որով դիմակայում են անգույց կրքերին: Համբերողը բուռն կրքերի վրա պիտոլ է, իսկ անհամբերը՝ կրքերից հարսախարված ու փկաբ:

Անհնար է, որ մարդը վրանգից աննեղանգված մնա, քանի դեռ այս կյանքում կենդանավորում է: Ուստի պետք է կարահար րոկակ ու հանրերի եւ իբրև անողորմելի ավելի կյանքի ծովի փոշուրությունների պիտեղի փշրել ու հեռ դարձնել, որովհետև ավելի լավ է փրատակցելաներին համբերել ու ապրել, քան անհանրեր քարքով հուսահարվել ու մահվան հանդիպել:

Պողոս Աղրիանուպոլսեցու «Խրատի բանգարանից»

## ԺԱՄԱՆԵՑ ԺԱՄԱՆԵՑ ԺԱՄԱՆԵՑ ԺԱՄԱՆԵՑ ԺԱՄԱՆԵՑ ԺԱՄԱՆԵՑ ԺԱՄԱՆԵՑ


### Ուղղահայաց.

1. Հին հույն գիտնական, գյուտարար: 2. Գերմանացի կոմպոզիտոր: 3. Հոգևոր ուսումնական հաստատություն: 4. Երևան, կրտսրած, ցարդ, ...: 5. Գեղարվեստական ձև ստացած բանավոր կամ գրավոր ավանդություն: 6. Պետություն Միջերկրական ծովի արևելյան ափին: 7. Խաղաղի ֆիզիկոս, աստղագետ: 8. Մարմնի մաս: 9. Գիշա-

պի կենդանի: 13. Հայկ եւ ...: 14. Երաժշտական հարվածային գործիք: 19. Երկրագործության եւ պտղաբերության աստվածուհին հունական դիցաբանում: 20. Պետության կրոնից ձեռնարկությունների արվող դրամական միջոցներ: 21. Անեռիկացի գրող, հասարակական գործիչ (1871-1945): 28. Հակաբուռ կարողություն կենտրոն Արևմտյան Հայաստանում: 29. Զարդ Թորր

Հայրում: 30. Եկեղեցի Երևանում: 31. Զարդ Հայաստանում: 32. Բնակավայր Հյուսիսային Արցախում: 33. 15-16-րդ. իտալացի նկարիչ, ճարտարապետ: 37. «... Երևան»: 38. Վառելանք: 43. Կեսադրական նշան: 44. Հայ մեծամունդ դերասան: 45. Կրակարան: 52. Օմով Երևանում եւ Փոքր Ասիայի միջև: 53. Հայ գրող: 54. Զարդ Հակաբուռիկություն: 55. Կլորտուսի մայրաքաղաք: 56. Հայաստանի երկրորդ համարապետության պետական գործիչ: 57. Ալվալուս եւ Արևմտյան Եվրոպայի ամենաբարձր լեռնագագաթը: 61. Երաժշտական գործիք: 62. Թռչուն: 67. Երևանցի նյութ: 69. Կարկանդակ, ...:

տության եւ արվեստի գործիչների իովանավոր: 23. Ռուս ցար: 24. Զարդ ԱՄՆ-ի Միչիգան նահանգում: 25. Մուշ, մատախտու: 26. Խոսքի մաս: 27. Յուզական դերանուն: 34. Էլեպի: 35. Պետություն Հարավային Ամերիկայում: 36. Սփյուռնախա բանաստեղծ, հրապարակախոս: 39. Երաժշտության մեջ հեշտունենիկ դասավորություն: 40. Հայ բանագետ, լեզվաբան, գրականագետ, քառասյանագիր: 41. Մեծ Հայքի նահանգներից: 42. Մագրի կյուրա: 46. Զարդ Գերմանացի: 47. Արևմտյան Եվրոպայի ամենաբարձր լեռնագագաթը: 61. Երաժշտական գործիք: 62. Թռչուն: 67. Երևանցի նյութ: 69. Կարկանդակ, ...:



Հորիզոնական.  
10. Հայոց արար: 11. Անգլիացի հանրահայտ դրամատուրգ (1564-1616): 12. Հայ գրող, բարձրանիչ, բանասեր (1910-1974): 15. Կողմնորոշման ռազմական ինքնաթիռ: 16. Հնագույն քաղաք Միջագետքում: 17. Վանք Լուիզյան: 18. Ալ. Բրիվանգալե. «Չար ...»: 22. Գի-

տության եւ արվեստի գործիչների իովանավոր: 23. Ռուս ցար: 24. Զարդ ԱՄՆ-ի Միչիգան նահանգում: 25. Մուշ, մատախտու: 26. Խոսքի մաս: 27. Յուզական դերանուն: 34. Էլեպի: 35. Պետություն Հարավային Ամերիկայում: 36. Սփյուռնախա բանաստեղծ, հրապարակախոս: 39. Երաժշտության մեջ հեշտունենիկ դասավորություն: 40. Հայ բանագետ, լեզվաբան, գրականագետ, քառասյանագիր: 41. Մեծ Հայքի նահանգներից: 42. Մագրի կյուրա: 46. Զարդ Գերմանացի: 47. Արևմտյան Եվրոպայի ամենաբարձր լեռնագագաթը: 61. Երաժշտական գործիք: 62. Թռչուն: 67. Երևանցի նյութ: 69. Կարկանդակ, ...:

**ՔՐԻՍՏՈՆԵԱՅ ՀԱՅԱՍՏԱՆ**  
Կրոնական, մշակութային, լրատվական երկշաբաթաբեր շինմադիր Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին  
Հրատարակիչ՝ Ս. Էջմիածնի Քրիստոնեական դաստիարակության եւ քարոզչության կենտրոն  
Գլխավոր խմբագիր՝ Կարեն Մաքեոսյան  
Գրանցման վկայական՝ 624, Դասիչ՝ 693333  
Խմբագրության հասցեն՝ ք. Վաղարշապատ, Ս. Գայանե եկեղեցի, Քրիստոնեական դաստիարակության եւ քարոզչության կենտրոն  
Հեռախոս (0+59) 56780  
Արտատվություն կատարելիս հղումը «Քրիստոնեայ Հայաստանին» պարտադիր է:  
Նյութերն ընդունվում են մեքենագիր վիճակում:  
ՍԱՅՐ ԱՌՈՒ Ս. ԷՄՍԻՍԸՆԻ ՏՊԱՐԱՆ  
Ստորագրված է տպագրության 28. 01. 2000 թ.  
Տպաքանակը՝ 2500 Գինը՝ 50 դրամ  
ԽՆԴՐՈՒՄ ԵՆԸ ԹԵՐԹԸ ԶՕԳՏԱԳՈՐԾԵԼ ՏՆՏԵՍԱԿԱՆ  
ՆՊԱՏԱԿՆԵՐՈՎ: ԿԱՐԳԱԼՈՒԲ ՀԵՏՈ ՏԿԵ ԱՅՆ ՄԵՎ ՈՐԻՇՇ: